


Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԴԻՏԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ


1877



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՄՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ



ԲՏԱՍԱՆՆՈՒԹՅԱՆ ՏՈՒԽ
ԹԻՒ 12.

ԱՄՍԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31
1877.

ԱԶԳԱՅԻՆ . ԲԱՆԱՅԻՐԱԿԱՆ . ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՄԱՍՄԱՐԱՐԱՅԻՆ ՎԵՐՆԱՆ (*)

ԱՅՈՊՅՈՒՄ տհա այն մեղաւոր եւ անհաւատ Սամարացի կինն , որ ի ըստ կրօնական այնքան զգուշաւորութեամբ իւր կենաց մեղաւոր գաղտնիքները թաղուցանելու կ'աշխատէր , Յիսուսի այն հրաշալի յայտնութեամբ՝ այլ յայրմէ լինելով , կը հաւատայ անմիջապէս թէ իւր խօսակիցը մի հասարակ մարդ չ'է՝ այլ ունի մի Աստուածային ազգեցութիւն , որով կարող կը լինի այնքան գիւ-

րութեամբ մարդկային կենաց դաղունիքները խմանալով՝ ճշգրութեամբ վեր հանել , ուստի՝ յԱստուծոյ ներշնչեալ մի մարդարէ կարծելով զիս՝ այնուհետեւ կը խօսի տարբեր աչք նկատել և խօսիլ իւր նախկին զգուշաւոր եւ կասկածելի դիրքը թողալով անկեղծութեամբ իւր մտքութիւնը խոստովանելով լուսաւորութիւն եւ ուղիւ ղուելու ջերմ փափաք կը յայտնէ եւ այն գովելի փափաքով երկար ժամանակէ ի վեր Սամարացի և Հրէայ աղ-

(*) Շարունակութիւն և վերջ , տես թիւ 11 .

Կայ մէջ վէճի և հակառակութեան
 նիւթ եղած մի խնդրոյ մասին իւր խօ-
 րակցի կարծիքը կը հարցնէ. « Հարբն
 մեր 'ի լերինս յայսմիկ երկրպագին. և
 դուք ասէք թէ Նրուսաղէմ և եթէ
 տեղի, ուր արժան է երկիրպագանելոյ.
 Ըստ որում Հրէայք երբ Աստուծոյ
 բարձր բաղիւս Քանանացւոց երկիր-
 ներուն տիրեցին, որպէս զի կռատանց
 մէջ չը զոհն և նոցա կուց ետեւէն չը
 մոլորին, Աստուած մի յատուկ օրէնք
 դրաւ որ ամեն խորայեւայի երբ իւր
 Աստուծոյն զոհ մատուցանէ պէտք է
 որ Աստուծոյ խորանին դուռը բերէ
 իւր զոհը և անդ մատուցանէ իւր ող-
 ջակէզը, որպէս զի Աստուծոյ ընդունե-
 լի լինի. ինչպէս յիշուած է սրոյ կեր-
 պով Աւետացւոց Ժէ. գլ. 7-10 հա-
 մար, « Իրենց զոհերը այլ եւս պիտի
 չը զենուն դիւաց, որոց ետեւէն եր-
 թալով պոռնկեցան. ասիկայ անոնց
 մշտնջենական կանոն պիտի լինի իրենց
 աղագց մէջ և անոնց՝ պիտի ըսես. խ-
 րայեւացւոց տնէն կամ նոցա մէջ պան-
 դըխտացող որ և է մէկն՝ եթէ տիրոջ
 ողջակէզ կամ զոհ մատուցանելու լինի
 եւ զայն ժողովոյ խորանին դուռը չը
 բերէ, այն մարդը իւր ժողովրդեան
 մէջէն պէտք է կորսուի » . Հրէայք ի-
 րենց զբուշութեան համար եղած այս
 հրամանը այլ ընդ այլ իմանալով՝ մի
 այլանդակ գաղափար ստացած էին թէ
 Նրուսաղէմէն դուրս մատուցուած ա-
 ղօթքներն ամենեւին Աստուած չը լը-
 սեր. այլ միայն այն աղօթքներն կը լսէ
 և կընդունի, որք Նրուսաղէմի մէջ կը
 մատուցուին. Հրէական այս ունայնա-
 միտ անափառութիւնը անշուշտ ամե-
 նէն աւելի իրենց մօտ դրացի Սամա-
 րացւոց ծանր կը թուէր, որք բոլորո-
 վին Նրուսաղէմէն դուրս կ'աղօթէին.
 հետեւաբար այս խնդիրն սոյն երկու
 աղագց մէջ շարունակ վիճաբանու-

թեան առարկայ լինելով մեծ կարեւո-
 րութիւն ստացած էր և ահա այս պատ-
 ճառաւ այն Սամարացի կիներ ևւս երբ
 կը հաւատայ թէ իւր խօսակցին մի
 մարդարէ է, ամենէն առաջ սոյն կա-
 րեւոր խնդրոյն լուծումը ստանալ կը
 փափաքի. ուստի առարկելով այս մա-
 սին իւր ունեցած կարծիքները՝ կը հար-
 ցնէ թէ ի՞նչ իրաւամբ և ի՞նչ ապա-
 ցոյցով Հրէայք կը պնդեն թէ Նրուսա-
 ղէմէն դուրս Աստուծոյ մատուցուած
 աղօթքներն չ'են կրնար ընդունելի լի-
 նիլ. մինչդեռ մեր նախահարբն Աբ-
 րահամ, Իսահակ և Յակոբ Նահապետ-
 ներն Նրուսաղէմէն դուրս այս լերանց
 վրայ մատուցած են Աստուծոյ իրենց
 ողջակէզներն ու պատարագները և այս
 լերանց վրայէն բարձրացուցած են Աս-
 տուծոյ իրենց բարեպաշտ զգացմանց
 սրտաբուլի մրմունջները, որոց լսելի
 լինելուն վրայ արդէն չը կայ բնաւ մի
 տարակոյս և մէք որ նոցա հետեւողու-
 թեամբ այսքան դարերէ 'ի վեր մի և
 նոյն լերանց վրայ կ'աղօթեմք մի և նոյն
 Աստուծոյն՝ ի՞նչպէս ուրեմն կրնայ լի-
 նիլ որ այնքան մարդկանց բազմու-
 թեան սրտից և հոգւոց ջերմեանդ-
 նուէրներն անընդունելի լինի մարդա-
 սէր և բարերար Աստուծոյն՝ որ իւր
 հայրական անհուն գթութեամբ իւր
 ամենաչնչին արարածոց վրայ անգամ՝
 հոգ և խնամք ունենալով՝ նոցա առ-
 ինքն բարձրացուցած ամենատկոր հա-
 ռաջներն իսկ կը լսէ. ապա ուրեմն
 ի՞նչպէս կրնայ լինիլ որ իւր արարա-
 ծոց հրաշակերտին՝ մարդկային աղգի
 այնքան բազմութեան հոգ ինկէն բղ-
 խած զեղուն զգացումները և ջերմ ա-
 ղաչանքները անտես առնէ՝ միմիայն սոյն
 պատճառաւ, որ նոքա Նրուսաղէմի կամ
 նորոտաճարի մէջէն չ'են մատուցուի-
 իրեն, այն Նրուսաղէմի, որոյ ամբար-
 հաւած բնակչաց անօրէնութիւնքն ու

անհաւատարմութիւնքը բաղմիցս պրզ-
ծած և ապականած են զայն և որ ՚ի պա-
տիժ և ՚ի նախատինս նոցա ունայնա-
միտ սնապարծութեան շատ անգամ
աղիտաբեր պատերազմաց, հրոյ և սրոյ
նշաւակ լինելով՝ հեթանոսաց ոտից
կոխան եղած և հիմն ՚ի վեր տապալած
է հանգերձ այն ճարտարագործ տա-
ճարով, որոյ վրայ խորխոտանօք կը պար-
ծին համօրէն Հրէայ աղինք, եւ այն
սնապարծ ու արհամարհոտ աղպն՝ որ
այլոց աղօթքը Աստուծոյ անընդունե-
լի լինիլ կը վճռէ Երուսաղէմէն ար-
տաքոյ մատուցուած լինելուն համար,
միթէ շատ անգամ դատապարտուած
չէ՞ իւր գերութեան երկիրներուն մէջ,
իւր նուիրական Երուսաղէմէն դուրս,
իւր Աստուծոյն աղօթքներ խնդրուածք-
ներ եւ պաղատքներ մատուցանել,
իւր անթիւ աղէտները լալ, իւր ցա-
ւոյ վրայ մորմոքել և իւր հոգւոյ վըշ-
տերն Աստուծոյ ներկայացնելով խո-
նարհական զղմամբ նորա հայրական
գլխութիւնը հայցել, իրենց փէտաց ըս-
փոփանք, իրենց աղէտից դարման եւ
դառն գերութեան վախճան և դադար
խնդրել, և միթէ այն տեղերէն չէ՞ր,
որ լսեց Աստուած իւր ժողովրդեան
ցաւաղին հառաջները, այն տեղերէն
չէ՞ր, որ հաճեցաւ նոցա խնդրանաց
կարեկից գթութեամբ վախճան տա-
լով նոցա թշուառութեանց՝ ժողովեց
և վերադարձուց իրենց հայրենի երկի-
րը և վերականգնեց աւերակ Երուսա-
ղէմի քարուքանդ փլատակները, Արդ-
ով Տէր՝ այսպէս լինելով հանգերձ գեռ
եւս ինչ պատճառաւ կը յամառին
Հրէայք իրենց այս անիրաւ պահանջի
վրայ, և դու որ Աստուծոյ մարդարէն
լինելով նորա ամենասուրբ կամաց
թարգմանն ես միթէ կը հաւանին հրէ-
ական այս անիրաւ դատաստանին:

ՅԻՍՈՒՍ արդէն ճանաչելով Հրէից
վէս և ամբարհաւած ոգին, շատ լաւ
կըմբռնէր կնոջ ամբաստանութեան ի-
րաւացի և բուն պատճառները. գի-
տէրնա թէ ի՞նչպէս Հրէայք առանց մի
արժանի կեանք ունենալու՝ կ'ամբարտա-
ւանին և սնաիրառութեամբ կը պարծին
իրենց կրօնի, օրինաց, ծիսից և աղբա-
շին սովորութեանց վրայ, նոցա խստա-
պարանոց և ապստամբ հոգին երթա-
լով այնքան հեռացած, օտարացած և
խորդացած էր այն աստուածաւանդ
կրօնի և օրինաց հոգիէն, որ բոլորովին
հեթանոսական վատթար մոլութեանց
անձնատուր եղած էր և բացի իրենց
կրօնի ծիսակատարութեան ձեւաբա-
նական արարողութիւններէն՝ որուն
հաւատարիմ էին ՚ի ցոյցս և եթ, ներք-
նապէս հեթանոսներէն աւելի մի վատ-
թար կեանք կը վարէին և իրենց այս
ամեն ապականութեամբ հանգերձ՝
դարձեալ չէին պատկառեր իրենք զի-
րենք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդ-
եւ Աբրահամու որդի անուանել. ու
բուն համար արդէն արժանապէս յան-
դիմանած է զնոսա Յիսուս. թէ «Եթէ
որդիք Աբրահամու էիք՝ զգործս Աբ-
րահամու գործէիք». սակայն նոքա՝
ամբարտաւանութեան և ունայնամիտ
սնաիրառութեան չար ոգիէն բռնուած,
առանց իրենց ներքին տկարութիւն-
ները ճանաչելու և ապօրինի կեանքը
ուղղելու, մի և նոյն կուրութեան մէջ
յամառեալ մնալով, տխրեցրաց Աս-
տուածն անգամ միմիայն իրենց կը սե-
փականէին զայլս իշխանաբար ՚ի բաց
մերժելով:

Յիսուս այս ամենուն քաջ վերա-
հասու լինելով, ընդ նմին տեսնելով
միանգամայն թէ հրէից ամբարշտու-

Թիւնն ինչպէս այն ատուածային օրինաց սրբութիւնը պղծած և նպատակը խոտորեցուցած է իւր ամբարտաւան խորհրդոց գործիք ընելով զայն՝ նորա ցտտագոյնութեան համար որ և է բան չը խօսիր, միւս կողմէն եւս որովհետեւ իւր բուն նպատակն էր քրիստոնէական Ս. կրօնի բարձր ճշմարտունը այն խնդր կնոջ ծանօթացնել, ուստի և առանց նորա պաշտպանած Սաւարացւոց սովորութիւնները կամ արարքը քննադատելու կնոջ հարցման մի այնպիսի պատասխան կը տայ, որով երկու գործողութիւն միանգամայն կը կատարէ, նախ քննելով կնոջ մտաց մէջէն աղօթելու համար տեղեկաց խտրուէ գաղտնիարը և երկրորդ՝ ցոյց տալով Քրիստոնէական կրօնի ուսուցած աղօթելու պարզ և վսեմ եղանակը, քանզի այսպէս կը պատասխանէ նորա հարցման, « Կին դու, հաւատա՞ ինձ զի եկեցցէ ժամանակ, յորում ոչ ՚ի լերինս յայտնի եւ ոչ յԵրուսաղէմ՝ երկրպագութեն , , , այլ ճշմարտութեն երկրպագութե՛ք՝ երկրպագանիցեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ որ և այլն ։ Ահաւասիկ մի համառօտ և վճռական խօսք, որ կը պարունակէ իւր մէջ շատ ընդարձակ իմաստ և Քրիստոնէական տիեզերածառը կրօնի ամբողջ հոգին և որ մի հարուածով հիմն ՚ի վեր կը տապալէ թէ՛ հրէական և թէ՛ հեթանոսական կրօնից՝ ծիսական խորութեանց և ձեւաբանական բազմաճղի արարողութեանց բազմադարեան և արմատացեալ սովորութիւնները՝ համառօտակի ցոյց տալով երկրպագութեան արժանի միակէտին և երկրպագելու պարզ բայց վսեմ եղանակը, այլ թէ ինչպէս կը լինի հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագելն՝ միայն այն բարեպաշտ և զգայուն հոգիները կրնան ըմբռնել, որք զիտեն թէ ինչ է Աստուած եւ

և ինչ նմա աղօթել կամ երկրպագութիւն մատուցանելն ։

Աստուած բնա օրում հոգի է անտեսանելի և անհայելի, միայն հոգւով կարելի է զնա ըմբռնել, նմա մերձեւնալ և հեռն հաղորդակցիլ, հետեւաբար աղօթից սովորական դարձած աւան ձեւերն եւս ոչինչ նշանակութիւն չեն ունենար, երբ աղօթաւորի հոգին անգգայ է և մեքանաբար կը կատարէ զանանք, և այսու մարդ մը աղօթքը բնա չը լինիր բնաւ, ինչպէս ասած է մի ծերունի աղօթաւոր թէ, « Ութսուն տարիէ ՚ի վեր կ'աղօթէի, սակայն բնաւ աղօթած չեմ եղեր որ, ըստ օրում ութսուն տարիէ ՚ի վեր ըսկ աղօթից սովորական ձեւերը կը կատարէ եղեր առանց հոգւով բան մը զգալու, սակայն այնքան երկար տարիներէ զինի երբ մի օր հոգին եւս կը շարժի եւ կը զեղանի՝ այն տուն կը դգայ միայն թէ ինչ է աղօթելն ։ Արդէն այս մասին Յիսուս ինքնին եւս բաւական բացատրութիւն տուած է մեզ իւր այն արարքով՝ երբ փարիսեցւոց հրապարակային աղօթից կեղծաւորական ձեւաբանութիւնները յանդիմանելով կը հրաւիրէ սենն կի մէջ առանձնանալ և ծածկապէս աղօթել այն Աստուծոյն, որ տեսնէ ՚ի ծածուկ, իսկ այս առանձնութիւնն եւս պէտք չէ խմանալ նիւթագէս, այսինքն թէ իրօք մարդիկներէ հեռանալ և սեննեկաց մէջ փակուիլ, ոչ այնպէս, քանզի մարդկային մարմինն արդէն մի առանձին և անթափանցելի բնակարան է, ուր առանձնացած է մարդոց հոգին, հետեւաբար ամեն մարդ եւս հրապարակային աղիւմքներու և բազմաժողով սրահներու մէջ գտնուած ատենն իսկ կրնայ միանգամայն ինքն իւր մէջ առանձնացած լինիլ և հոգովն Աստուծոյ հետ զբաղիլ և նմա երկրպագութե

թիւն մատուցանել, ահա այս է հոգով և ճշմարտութեամբ երկրպագանելու և զոհանքներ, որ Աստուած կը յայտնէ Սամարացի կնոջ, որոյ վսեմութեան և բարձրութեան վրայ թէեւ կը տրանսլանայ բարեզգաց կիներ, այլ սակայն իւր նորածին հոգին չը կարենալով լիովին ըմբռնել այս բարձր և վսեմ յայտնութիւնը, կը յայտնէ ապագայի մէջ այս ամենը կատարելապէս ուսանելու յոյժ խոստովանելով Մեսիայի գալուտեան վրայ ունեցած հաւատքը, քանզի կ'ասէ « Գիտեմք զի Մեսիա գայ առ նուանեալն Քրիստոս, յորժամ եկեացէ նա պատմեացէ մեզ զամենայն » : Աստուածորդին Յիսուս, որ արդէն այն բարձր նպատակաւ սկսած էր այս խօսակցութիւնը, այսպէս ստորիճանաբար կը թելով այն ողորմելի կնոջ սիրտն ու հոգին և տախա առ տակ ու բարձրացնելով նորա մտածողութիւնը, երբ կը հասցնէ մինչեւ հոս, ուր կիներ կը խոստովանի Մեսիայի գալուտեան վրայ իւր ունեցած հաւատքը, այն ատեն Յիսուս կը յայտնէ ինքնինքն ասելով թէ այն Մեսիան « Ես եմ որ խաչին ընդ քեզ, կնոջ սիրտն ու հոգին առդէն պատրաստուած լինելով անկասկած կը հաւատայ և ուրախութեամբ գիւշ կը վազէ այս մեծ աւետիսը նոյս եւս հաղորդելու :

Գ. Ս. Շահանշահ :



ՆԵՐԿԱՅ ԴԱՐՈՒՍ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ

ԱԶԴԱՅԻՆ ԿԵՆԱՅ ՎԵՐԱՅ

Ազգի մը ներկայ յառաջագիմութիւնը կամ յետադիմութիւնը կը առգատելու համար միշտ անցեալը իբրեւ

բաղդատութեան եղբ հարկ է տանել, երբ ներկայն ամեն մասաւր եւ ամեն հանգամանքներով կը դիտարկուի անցեալը, կը նշանակէ, որ նոյն ազգը աւելի յառաջագիմած է, իսկ ընդհակառակն եթէ ներկայն աւելի նսեմ, աւելի ախուր կողմեր կը ներկայացնէ, կը նշանակէ, որ աւելի յետադիմած է և անցեալը աւելի նախանձելի և փոփառելի յիշատակ մը թողած :

Այսպէս եւս մեր ազգի ներկայ կեանքը ճշգրտութեամբ դնահատելու համար հարկ է, որ անցեալէն պատմական մի ժամանակ առնեմք, որ Ազգ. կենաց զարգացմամբ նշանակութիւն ունենայ, և անով կըսեմք, կամ չափեմք ներկայն, առանց մի այսպիսի համեմատական քննութեան ամեն դատողութիւն թիւր և ամեն հետեւութիւն սխալամարտական կը լինի :

Այս մասին ամենէն յորմար ժամանակը ըստ մեզ ՏՐ դարն է. վստն զի եթէ Ազգ. կենաց մէջ ունեցած եմք փառապանք և նախանձելի մի ժամանակ, եթէ ունեցած եմք մի դար, յորում Հայութիւնը ազգային բոցավառ եռանդով եւ ինքնօրէնութեան երկնառուր զգացմամբ կը փայլէր ի մէջ ազգաց, յորում իւր անկախութեան և ազատութեան համար կը գիւմագրաւէր կենքը և մահուամբ ազգական բարբարոսութեան, այն երանաւէտ ժամանակը, վսեմ դարը ՏՐ դարն եղած է. յորում կրօնական երկնային հուրը՝ ազգասիրութեան հիանալի բոցոյն հետ գիրկ ընդ խառն կը ծաւալէր և կը ծառանայր մինչ յերկինս, կ'ապշեցնէր ու կը սասանեցնէր ամեն արհաւիրական բռնութիւն, որ ընդդէմ խղճի և հայրենեաց ազատութեան : Նոյն դարոյն մէջ քրիստոնէութիւնը իւր փրկարար ազդեցութեամբ կը հրաշագործէր քրիստոնէական ուս-

ման անհրաժեշտ կարեւորութիւնը ազգային մասնագորութիւնը կը ծնանի. աշատութեան սէրը, որ երկնից մեծապարգեւ շնորհն է, ազգութեան մեռալուտ հորիզոնին վերայ լուսափնուատողեր կը լուսափայլէ, կրօնասէր և հայրենասէր մեծ գիւցազուններ, ուր աղբի փրկութեան համար յօժարակամ իրենց անձը կը պատարագեն հայրենասիրութեան սէրանին վերայ. կը ծըլին և կը փթթին ընդարձակածաւալ հանճարներ, որք ազգի լուսաւորութեան և յառաջագիմութեան համար չ'են խնայեր ոչ քիրան և ճգունք, ոչ արտասուք և արիւն: Ահա՛ 57 դարու մանրանկար ուրուագիծը:

Ներկայ 197 դարը, որ առհասարակ ամեն աղբոց համար ծայրագոյն լուսաւորութեան, իրաւանց և աշատութեան դարն է ստուած և համարուած է, մեր Աղբոցին կեն սց վերաբերութեամբ ևս փոքր 'ի չստէ նշանակութիւն ստացած է համեմատութեամբ մի քանինախորդ դարերու: Եթէ ներկայ դարը չ'եղաւ մեզ համար իրաւանց և աշատութեան դար, գոնէ եղաւ առ երեւոյթըս լուսաւորութեան դար և այսու համեմատութիւն մի ունեցաւ 57 դարուն հետ: Գպրոցաց, ուսմանց և դիտութեանց կարեւորութիւնը ինչ համեմատութեամբ, որ զգալի եղած էր այն ատեն, նոյն համեմատութեամբ կը թուի ըլլալ և այժմ. ազգային կենաց յարատեւութեան, պայծառութեան և յառաջագիմութեան տարրերը գիտութեան և լուսաւորութեան մէջ կը տեսնէին և կը խոստովանէին նախնիք. նոյն դաւանութիւնը, նոյն հաւատը այժմ ևս կը լուրի ամեն շրթներէ. նախնիք հայրենեաց մէջ գրաւուած կը թափան հաստատութիւնները անբաւական և կարի անձուկ դաւելով յառաջագիմասէր հայամտքին,

կը զընէին աղբի տրամախոհ, փափկութանկ և երկարագի պատանիները յԱթէնս, 'ի Բիւզանդիան, 'ի Հռովմ, յԱղեքսանդրիա և այլ ամեն տեղեր, ուր կը ծաղկէին ուսմունք և գիտութիւնը, որպէս զի ժրաջան մեղուաց նման հաւաքեն զանազան գիտութեանց ծաղիկներէն մեղրի հիւթը և բերեն հայրենեաց ծոցը՝ հայրենի օդով ու ջրով զանգեն մեղր ու մամլուսաւորութեան. և արդարեւ հայրենասէր պատանիները կ'երթային օտար երկիրներ, երկար տարիներ տոկալով ամեն զրկանաց եւ նեղութեանց՝ կ'ուսանէին, կը լուսաւորուէին, և վերագառնալով հայրենի աշխարհը, ուր թէ և շատ անգամ սիրալիր ընդունելութիւն ևս չէին գտնար, այնու հանդերձ անյուսահատ ոգւով, անխոնջ գործունէութեամբ կ'աշխատէին ազգի վերաշինութեան համար. կը գրէին, կ'երկասիրէին, կը թարգմանէին և կ'ուսուցանէին: Այժմ եւս շատ հայամանուկներ մեծամեծ զոհութեամբ կը զրկուին Եւրոպիոյ այլ և այլ քաղաքները ուսանելու նպատակաւ. բայց ինչ կ'ուսանին, ինչ նիւթ կը մշակեն, ինչ հոգւով ու սրտով կը վերագառնան, ինչ կ'ուսուցանեն եւ կը քարոզեն:

Ինչպէս կ'երեւի այս երկու դարուց մէջ արտաքին հայեցմամբ համեմատանութիւն մի կայ. բայց մի սուր ակնարկ բաւական է պատրանաց քող պատռելու. մի նրբազնին հայեացք բաւական է 'ի վեր հանելու սոցա ներքին աննմանութիւնը, ոգւով և ուղղութեամբ անմիաբանութիւնը և հետեւաբար ներկայ դարուս մեր Աղբոցինաց վերայ բրած տպաւորութեան օգտակար կամ վնասակար հետեւութիւնը, Գովութեան և յարգանաց արժանի է յառաջագիմական ամեն շարժում. բայց թիւր ուղղութեամբ, հաւ

կաղգային ոգւով ամեն քայլափոխ կորստաբեր է և հետեւաբար դատաւարտելի :

Անհետարին կուրուծիւն է՝ լուսաւորութեան առանց ներքնայն՝ լոկ արտաքին շղարին փարիլը , առանց ոգւոյն՝ կեղեւանքին սիրահարիլը . այլ սակայն եթէ մի անաչառ տիրարի ձեռքեմբ աղգային կենաց վերայ , պիտի տեսնեմք , որ այս վտանգաւոր կուրուծիւնը տիրած է մեղմէ շատերուն հոգւոյն ու սրտին . մեռուցած է սոցա մէջ ամեն աղգային զգացում . ջնջած է ամեն սրտաւորութիւն առ աղբն : Կրկոէ սոցա գրուածները , արտայայտած գաղափարները ու երկնած կարծիքները , չը պիտի գտնես անոնց մէջ աղգայնութեան տիպ և ոգի . աղգայնութեան զգացում և սիրտ , այլ խորթ և օտարոտի վիժմունքներ . խօսէ նոցա հետ նսխնեաց սխալագործ արարքներուն վերայ . երբէք հաւանութեան ցոյց մի չը պիտի տեսնես . վստի զի առանց համար նորա աղբի ասպագայն չը մտածողներ էին , այլ միայն ժամանակի բերմանց հետեւողք . սոցա [համար Վասակները , Մեհրուժանները , Վեստ-Սարգիսները իրենց աղգաստական խորհուրդներով ու գործերով աւելի իմաստուն , խոհական և հայրենասէր են . իսկ Վարդան , Վահան և այլ նահատակք հայրենասիրութեան՝ են կոյր մղեռանդներ , անհեռատես և անչորջահայեաց յուսահաա և լքեալ ոգիներ : Սոցա համար Սուրմակները , Մըջնիկները , Կիրակոսները , Նիկոլները և նոցա ոգւով ու սրտով սնուած և սեւեւցած ամեն եկեղեցականները առաւել աղգասէր , կրօնասէր և Եկեղեցւոյ պայծառազարդութեան նախանձախնդիր են , քան թէ Ներսէս , Սահակ , Մեսրոպ և այլ անձնադիր հովիւք և հայրապետք , որք արտասուաց՝ յոյսը , հա-

ռաշանայ՝ երկնային միթարութիւնը խառնելով՝ աղբի ասպագային հիմունքը կը գնէին :

Եթէ այս երանաշնորհ Հայրերը իրենց դարուոր դամբարաններէն յառնէին և տեսնէին , որ իրենց քրտամբ ու արեամբ սերմանած աղգաստարար սերմերը ինչպիսի օտար փշերով խեղդուած և անհետ ջնջուելու վրայ են , ինչ վայեր և անէծքներ չը պիտի թափէին արդեօք մեր գլխուն :

Այս անմիտ և նորամուտ դատումները , որ հետզհետէ ներկայ սերունդեան մէջ ընդհանրանալու և տարրանալու վրայ են դժբաղդաբար . չ'եմք մեղանէր , եթէ բարձրաձայն լսեմք , թէ 197 դարու լուսաւորութեան մեր աղբին սարգեւած նախընծայ պոռուղներն են :

Ո՛վ չը գիտեր , որ անփորձ մանկան համար աւելի հաճոյական և հրապուրիչ է կրակին խանձող բոցը , քան ջեռուցիչ և կենսակիր զօրութիւնը , ո՛վ չը գիտեր , որ տգէտին համար շատ անգամ ծուխը քան թէ լոյսը նախաժնար է , ձգմարիտ է այս ինչպէս անհասներու , նոյնպէս աղգերու համար : Ամեն նոր արթնցող աղգեր շատ անգամ փոխանակ իրական յառաջագիմութիւնը գրկելու , լուսոյ փայլ ու շուք ունեցող մղութեանց և մղորութեանց կը փարին . շատ անգամ ճըշմարտութիւնը սիրելու տեղ՝ ստուծեան կը սիրահարին :

Յուալի է խոստովանիլ , որ մեր աղբն եւս իբրեւ նոր արթնցող աղգ Եւրոպայի կրթութեան դիրտն ու մղորութիւնը ընդունեց . իւր աղգային կեանքը ուսումնասիրելէ առաջ՝ Եւրոպացւոյն կեանքը ուսաւ և անոր սիրահարեցաւ . փոխանակ իւր Աղգ , մատենագրութիւնը ուսումնասիրելու , քննելու և զարգացնելու , Եւրոպայի

գեղձ բարույ և կենաց սիրալէպերուն մէջ նիւթ և ճարակ գտաւ ընթերցանութեան և ուսումնասիրութեան :

Մի արեգիսի խակ ընտրութիւն , կամ ո զլուծիւն մեր Աղէ . կեանքը բարեքելու , աշուտագոյն գործելու տեղ առաւել կը վստթարցնէ . այսու ուղղութեամբ մեր ընդարդոյս յատկութիւնները , բարքը և բնաւորութիւնը կորուսանելու վերայ եմք : Բայց անշուշտ նորասէրներու համար յառաջագիմութիւնը նորութեան մէջ է . հին բարքով , հին կեանքով և հին կրօնքով անհնարին է ժամանակի յառաջագիմութեան մասնակցիլ :

Անշուշտ այս կարծիքով և այս գաղափարով է , որ այսօր մեր մէջ շատերուն համար կրօնքը մի եղջերուաքաղ եղած է . կրօնասիրութիւնը՝ մի ուրուական , աղգ եւ աղգասիրութիւն՝ աննշան բաւեր , սոցա վախանակ տիրած են անձնականութիւնը , եսականութիւնը և կիրքը : Ո՛վ կըխորհի և որո՞ւ փայթն է թէ բովանդակ աղգը հրոյ և սրոյ կեր և ճարակ կը լինի , բաւական է , որ մի քանի խառվաշոյլ , մի քանի աղգանենգ անձանց խօսքն ու խորհուրդը յառաջ քաշեն . ինչ փայթ թէ աղգը օր յստ օրէ ձեռքէ կ'ելլէ , որս կը լինի Բողոքականութեան , կամ Պապականութեան անքուն հետ սմուութեանց , ասանցմէ աւելի կարեւոր և կենսական խնդիրներ են այս ինչ Եկեղեցականին , կամ այն ինչ էֆէնտիկն յուզած շահագիտական խնդիրը : Ահա՛ մի լուսաւորութիւն , որ առաւել կը խաւարեցնէ , մի յառաջագիմութիւն , որ առաւել 'ի կորուստ կ'առաջնորդէ :

Ճշմարիտ է , որ այս օրինակ ախուր երեւոյթները նոր չ'են Աղգային կենաց մէջ . մէն մի դար իւր Վասակները ունեցած է , մէն մի դար իւր աղգադաւ-

նէրն ունեցած է . բայց ընդ նմին ունեցած է այնպիսի ընտիր գաւակներ , որք իրենց անձնակրական սիրագործութեամբ ունայնացուցեր են վստթուն մտադրած ամեն չարիքները և աղէտները . բայց այժմ ամեն նենգութիւն անխիղճ 'ի դործ կը դրուի , վստթն զի ժամանակը լուսաւորութեան , ազատութեան և իրաւանց դար է :

Քան թէ մեր այս տողերով Եւրոպայի լուսաւորութիւնը այսպէս եւրպատակ ունենամք , լոյսը չը սիրողը կամաւ կոյր լինելու է : Եւրոպան համայն մարդկութեան մեծամեծ ծառայութիւններ ըրաւ գիտութիւնները մշակելով , այլ սակայն մոռանալու չ'է նա եւս , որ Եւրոպան ինչպէս կրթութեան և լուսաւորութեան վառարանն է , նոյնպէս շատ տեսակ մոլորութեանց և մոլութեանց կեդրոնն է , ճառագայթելով Եւրոպայէն լոյսը՝ ամեն ընդունակ և պատրաստուած մտքերը կը լուսաղարդէ . դարձեալ յորդելով Եւրոպայէն մի շատ ոչ-ողջախոհ միտքերու և դադափարներու հեղեղը՝ կողովէ և կ'ապականէ չը պատրաստուած մտքերը :

Առաջինէն աւելի վերջինը աղգած է մեր աղգի ուսումնական կարծուած մասին վերայ . ասոնցմէ շատերը Եւրոպայի բնութենականներէն փոխառած կարծիքները ոգւով չափ կ'աշխատին ծաւալել աղգին մէջ . կը ջանան ջնջել յանուն լուսաւորութեան և յանուն ազատութեան ամեն նուիրական և սրբազան զգացումներ , կը զինին կրօնի դէմ , հաւատոյ դէմ եւ ամեն բարեպաշտական ձեռնարկութեանց դէմ . ոմանք այնչափ յառաջ գնացին այս մասին , որ ծայրայեղ անմիտութեամբ դրեթէ ըսին , գոցենք եկեղեցիները , ջորդեմք և վաճառեմք նոցա սպանները և վերցնեմք նորա սլաշ-

տօնէութիւնը . ինչ ընելու համար . —
Պարոյցներ հաստատելու համար . որ
պէս թէ Հայաստանեայց Եկեղեցին
ընդգէմէ դպրոցս . որպէս թէ նո-
րապաշտօնէութիւնը կ'ստեղծուի ազ-
գի յառաջագիւմութիւնը , կը խեղդէ
այս մօտին ամեն բարի բաղձանքներ :

Չեն մոռնաւ երբեք դոքա , որ ազ-
գին մէջ եղած դպրոցները եկեղեցեաց
եկամութենէն կը խնամուին և կը պահ-
պանուին , կը մոռնան , որ Եկեղեցւոյ
պաշտօնէից , իբրև մուրացիկներու հա-
ւաքած լուսանքով կը ծարուին դպրո-
ցաց պաշտօնեայներու վարձքերը Գու-
շակութիւններ կընեն , եթէ Հայն ա-
պագայ չ'ունի , որոյ գլխաւոր պատ-
ճառներէն մին է եղեր ազգին կրօնա-
կան դաւանութիւնը :

Ի՞նչ ըսել կ'ուզեն . — Թէեւ յայտ-
նի և համարձակ չ'են ըսեր մտքերնին ,
բայց գիւրին է մակաբերել իրենց բա-
րոգած սկզբունքներէն , զորս Աստուծ-
մէ աւելի կը պաշտեն , եթէ դոքա ազ-
գերու ապագայն , ազգերու երաջխա-
ւորեալ կեանքը անկրօնութեան , կամ
քրիստոնէութենէ տարբեր մի կրօնի
մէջ կը տեսնեն . վստն զի , կըսեն , Քր-
իստոնէութիւնը Հայուն բարքն ու բը-
նաւորութիւնը այլակերպեց , Հայուն
սիրտն ու հոգին երկնային և վերացա-
կան ապագայի մը բեւեռեց :

Արդարեւ մեր եւս պիտի ըսեմք ,
թէ մեր ազգը ապագայ չ'ունի . քանի
որ իւր զուակները օտարներէն աւելի
կ'աշխատին ամեն յոյս եւ ակնկալու-
թիւն ունչայնէ . քանի որ իւր հարա-
զատները կը կոծաղեն և կը խորտակեն
ալիքին յուսոյ և միակթարութեան տա-
ճարը , Տասն և հինգ դարէ ՚ի վեր Հա-
յուն հայրենիքը և միութեան կեդրո-
նըն եղած է կրօնը թէ ՚ի հայրենիս ,
և թէ ՚ի սրանդխտութեան . եթէ խը-
ղեմք այն կապը , ինչով այնուհետեւ

պիտի կոպեմք ազգութեան անդամ-
ները : Քրիստոնէական կրօնը Հայու-
թեան ցամաքեալ դաշտին արգասաբեր
զօրութիւնն եղած է , այն երկնային
շունչը , որոյ հրաշակքը տեսաւ Եղե-
կիէլ ՚ի տեսլեան , որ մէկ ակնթարթի
մէջ ոսկերքը լի անապատը կենդանա-
ցոյց : Եթէ մերթեմք այդ աստուա-
ծային շունչը , ուստի պիտի չնչէ մեզ
մի նոր զօրութիւն , որ ՚ի մի բերէ ազ-
գութեան տարանջատեալ անդամնե-
րը , որ ցամաքած երակներու մէջ անդ-
րէն չըջան տայ նոր կենաց ու կենդա-
նութեան :

Ինչ որ դարերով մեր ազգութեան
և կրօնի թշնամիները կընէին և մինչեւ
ցարդ անդու և անքուն կընեն , նոյնն
է և մեր ըրածը . Ազգի մը անկախու-
թիւնը և փրկութիւնը թշնամոյն գոր-
ծակցելոյն մէջ չ'է , այլ նորա նեախց և
նենգութեանց դէմ ազգային համա-
կամ գիմակալութեան մէջ : Մեր գըւզ-
րոցները զսրգայնեմք ամեն տեսակ
գիտութեամբք որչափ կարող եմք , բայց
միշտ պատկառ մնամք կրօնքին , ուսու-
ցանեմք մեր զուակաց ամեն ուսումն ,
բայց նոյա հիմը վրնելու է կրօնի և ազ-
գութեան ուսումը : Մեր կը հաւատամք ,
որ երբեք գիտութեանց ողջախոհ վար-
դապետութիւնը չը հակառակիր կրօնի
վարդապետութեան և փոխադարձա-
բար , ալ ընդհակառակն աւելի զիրար
կը ջորայնեն և կ'արմատացնեն : Արդ-
քանի որ այսպէս է , աւելորդ է և մի-
անդամայն վնասակար ամեն երկու խօս-
քին մէջ կրօնքին , եկեղեցւոյ և նորա
պաշտօնէութեան դէմ քար նետելը :
Նետելք այդ քարը ամենքս մէկ տեղ
բայց ոչ իրարու դէմ , ալ անոնց , որք
մեր ապագային , մեր գոյութեան եւ
ազգութեան կրտսեղնան . այս կը պա-
հանջէ ազգի օգուտը և զայս կաակած
են մեզ մեր նախնիք :

ԿԱՐԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ՈՒՍՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ (1)

Ժամանակը, թէեւ կը տապալէ, կը կործանէ Տէրութիւններ և իշխանական փառքեր, սակայն կայ մի բան, որ կը ճողողորի նորա համայնաճախ ժանիքներէն. սա ամեն եղծիչ և տապահանիչ զօրութիւն կը քամահրէ. և այս իսկ է առաքինութեան սքանչելի անունը. յիշատակ սխրագործութեանց:

Աշխարհաստան ինքնակալներ, մեծամեծ տէրութիւններ, կը մրցին զմիմեամբք ելանել. միմիայն յիշատակ մը թող տալու համար, միմիայն իւրեանց արարքները ու վէպը հրաշակերտներու վերայ քանդակելու, և զապագայն սքանչալանելու համար: Ի՞նչ են մեր չորս կողմը գտնուող յաղթական կամարներն, արձաններն և շիրիմներու պերճ կոթողներն, եթէ ոչ մէկ մի վկայներ մեծագործ մարդկանց և աշխարհաչէն թագաւորաց արարքներուն:

Համբռն աշխարհ իւր բարերարաց անունն ու յիշատակ յաւերժացնելու համար կը կանգնէ շքեղ և բազմաճախանդ իններ, որք թէ և անմուռնջ և ցուրտ բարեր են, այլ սակայն տապալան ուղղելու և բարեկեցելու մոգական զօրութիւնն ունին: Բայց ո՞ր են Աւետարանի զաւակաց կաթողներն, ո՞ր նո-

ցա յիշատակն ու անունը, նոցա անթառամ դափնիներ. ո՞չ տապալէն նոցա յաղթանակ գեր ՚ի վեր գաւաքան զամենայն յաղթանակս ահեղ աշխարհակալաց. վասն զի ո՞չ երբէք զանգիտեցին հաւատոյ թշնամեաց սրերէն, Աշխարհի մեծութիւնը և փառքը արհամարհելով՝ ամեն դառն եպեր եւ կոտանք առ ոչ ինչ գրեցին. ընկնաց մէջ իւրեանց միակ մխիթարութիւնն էր նախատանաց փայտէն կախուած անմեղը, որ վասն մեր յանցապարտ և անէծ եղաւ. նոցա միակ զօրութիւնը, Գողգոթայի կառավանարանն էր. նոցա քաջալեր և համբերութիւն, վայրագ դահճաց սուրն ու սուրն էր. այս ամեն արհաւիրանց մէջ զինավառեալ երկնաւորին խաչով ու սիրով արիաբար կը գոռային. ո՞ր մահ յաղթութիւն քո, ո՞ր դժոխք խաթմոյք քո, և ուրախութեամբ մահուան դառնալ յատակ բաժակը կը քամէին. միթէ այս յաղթական զինուորները չ'էին արժանաւորք կոթողներու, ո՞ր են ՚ի մասնաւորի մեր Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակաց համար կանգնուած հրաշակերտները. մեր Եկեղեցին ի՞նչ բանով անմահացուցած է նոցա անունը և յիշատակը. մոռացած է իւր որդեկաց իրրեւ գետ գարնանազոյր հոսած արիւնը. — ո՞չ, չ'է մոռացած իւր պաշտպանութեան, յարատեւութեան և յառաջագիմութեան համար նոցա կրած վերքերը. այլ նոցա անունը դարուց ՚ի դարս անմուռաց պահելու համար կանգնած է գոռ ող և յաղթ արձաններէն գերահրաշ մի յիշատակաւ, ունին Եկեղեցւոյ զաւակները իւրեանց փառաց հանդիսարան, ունին անկեղծ և յաւերժական կոթող և այս իսկ է Եկեղեցւոյ պատմութիւնը, որ թէեւ առ երեւոյթս անխօս, սակայն միշտ կը բարբառի, միշտ կը հր-

(1) Սոյն գրութիւնը գրուած է Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ ուսումը լրացնելէն յետոյ իրրեւ փորձ, կամ կրթութիւն, զոր ՚ի քաջալերութիւն արժան համարեցինք Սէթի մէջ դնել:

ձուլի, միշտ կը ցնծայ, մերթ եւս հառաչելով:

Այս յիշատակարանը, կենդանի երանգօք կը նկարէ Աւետարանի զուաւիաց փառաւոր յաղթանակը՝ Հեթանոսական և Քրիստոնէական պատերազմը և առաջնայն այս քաջամարտիկ զինւորներէն ամօթաշար պարտութիւնը:

Մինչդեռ մի կողմէն Հեթանոսութիւնը անարգել յառաջելով մարդիկը դիւապաշտութեան կը հրապուրէր, անդուստ կը ժամանէ երկնային մի մը խիթարութիւն. կը ծագի ճշմարտութեան լուսայնցող արեգակը, լոյս ու յոյս կը սփռէ մեղութեամբ զմրեալ մարդկութեան վերայ. սիրտ ու կեանք կը ապա չ'ապտուածոյ պանտուանգին տակ կ'լսակենդան ինկած մարդոյն. կը պատառի Հեթանոսութեան խաւարչ տին քօղը. ՚ի վեր կ'երեւի դարուցալէծութի Ողիւսեան լեռն սցեալ կոհակներէն մարդկութեան սղատարար նաւը, քրիստոնէական երկնային կրօնը, որոյ ղեակն է Ս. Խսքը, Նաւապետը՝ ինքն Հայր Աստուած, ղեկավարը՝ յաւիտենական Բանը, միշտ զօրութիւնը՝ յառաջ բան զլինելն աշխարհի խորափիտ անդնդոց վերայ սաւառնող Ս. Հոգին:

Հեթանոսութեան ուղիւնու կատաղացեալ ալեքները կը լեռնանան. հոգմբ ուժգինս շնչեն. սահանք Զուրց գոգցես կը ճգնին խորասոյգ անհետ կորուսանել նաւն փրկարար:

Հեթանոսութիւնը ընդգէժ կը զինի քրիստոնէութեան, կը ջանայ խեղդել զայն իւր զաւակաց արեամբ, այլ սակայն ՚ի զմէր էին նորա հետամտութիւններն և ճգունքը. ՚ի զմէր կը յաւակներ և կը ձկտէր դիտապաստ յերկիր կործանել երկնաքաղաքոցն. զմէր էր ամեն հալածանք, ամեն տանջանք և տանջանքան, զի նա իւր տկարու-

թեամբ աշխարհի հզօրներն պիտի տապալէր և տապալէր: Խաւարամիտ և մացառամիտ Հեթանոսութիւնը Քրիստոնէութիւնն հալածել կը կարծէր. այլ վաճ յիմարութեան, զի նա յանգէտս զայն առաւել եւս կը տարածէ, զի հաւատացելոյ մահը կեանք էր արդիւնաբեր. նոքա իւրեանց մահուամբ կը ծնէին բիւրաւորս հաւատացելոյ. երկիրը, նոյա արեան բոսորաբուղիս կաթիլներով պարարուելով ատոք հասկեր կը տար:

Եկեղեցական պատմութիւնը ժողտելով կը պատմէ այս ամենը, ցնծութեամբ կը նկարագրէ Աւետարանի և Եկեղեցւոյ՝ հարադատ զաւակները՝ Քրիստոնէներ, Ներսէսներ, քրիստոնէական լուսաւորութեան և դպրութեան ամօններ. կ'ուրախանայ երբ կը պատկերացնէ Եկեղեցւոյ պաշտպանութեան համար նուիրեալ զոհեր ու մարտիրոսներ՝ Վարդաններ, Վահաններ և այլ անձնուէր անձինք, որք իւրեանց մօր արտաքուստ կրած հարուածներն ու նայնացնելու համար մահ ճաշակելով՝ փառաց անթառամ պսակ ընդունեցին. այլ ստիպին կը հառաչէ երբ կը ներկայացնէ ուխտանենք, ժանտ ու պղծալից ապիրատներ՝ Վասակներ, Մեհրութաններ, որք երկնային աստեւոր փառքը երկրաւոր վաղանցիկ փառաց զոհելով՝ Աւետարանը մերժեցին: Կ'արտասուէ, երբ կը պատմէ թէ լինչպիս նոքա իւրեանց կեանքը ուրացութեամբ կնքեցին, զիւր յերկնաւորին փառաց, թափուր յարտասուաց ջերմ սիրեւեաց:

Զգայուն և հայրենասէր անձը, երբ կ'ընթերցասիրէ այս յիշատակարանն, սկզբան կը հիանայ և կը սքանչանայ. սակայն ապա մեայլուտ զգացում մի կը յաջորդէ: Վասն զի կը տեսնէ հոն, որ ժամանակին յանդուգն և կրօնական մուկանդն ձեռնարկութիւնները շա-

հասիրութեան եւ փառասիրութեան հետ խառնուելով՝ մի կողմէն այլանդակ հրէշներ կը ծնանէին և միւս կողմէն ազնիւ և դիւցազն ոգիներ կը խամբէին : Երբ տեսնէ կրօնի թշնամեաց պարտութիւնն , որք ճշմարիտ հաւատոյ սիւններն ու նեցուկները կործանել ուղեւոր ինքեանք կը կործանին , կը փրշրին ու կը հոսին , կը հիանայ , սակայն ընդհակառակն կ'ընկղմի 'ի ցաւս և 'ի վիշտս երբ նորա առջեւ պարզուին անհաւատարիմ և աղիրատ անձանց աւրաքները , որք իւրեանց փառասիրութիւնն յադեցնելու համար կ'անարգէին իւրեանց մայրը , կը մերժէին զիրենք վերսճնող Հօգին . կը մոռանային այն անողորմական արիւնը , որ զիրենք քաւեց , միանալով դիւսպաշտ մայերոնից հետ , կը ճգնէին իւրեանց աղքատիցներն ու եղբայրները կորստական անդունդը դաւ հալածել ուր ինքեանք ինկած էին . առ այս ամեն անարգական միջոցներ կը դործադրէին . ձեռքերնին սուր , լեզունին նենգութիւն , սրտերնին դժօխք կը զինէին իւրեանց հարադատաց դէմ . կ'աւելցնէին նոցա վիշտն ու մորմնք :

Այս սրտաճմլիկ եւ մեղամաղձոտ հանդիսարսնէն ելնելով , մերթ կը դէկաթ անձկանօք կը սրանայ Արտաղու գաշտը՝ հայրենասիրութեան մարդարանը , ուր մահարչաւ մարտիրոսներ դիւթաւալ յերկիր կը խաղան . նահատակներ կը գոռան և կը գոչեն զերդորոտ յամպս : Մերթ կը սուրայ իբր 'ի թեթեւ թեւո հողմոց ոսկեգարու ընդարձակ ճեմարանը , ուր կը տեսնէ վեհ և լուսադնցող ճակատներ՝ հայրենեաց աւերակներէն վերկենցաղ չունախարհիկ լծակիցներ , որք մի ձեռքերնին դիտութեան ջահն լուսակարկաչ և 'ի միւսուսմն թաշարիւնազանգ , արիւթեամբ յաստարէզ կը խոյանան , բերտն ու արտասուք , հաւաչ և ա-

ւաչ 'ի մի խառնելով՝ լոյս և երկնային կաթ կը ջամբեն , կ'ամրապնդեն ազգի միութեան կապը , սրտի և մաքի ըսքանելի զարգացմամբ Ազգի բազմադարեան տեւականութիւնը անխախտ հիման վերայ կանգնելով :

Այսպէս ահա անձնիւր անհատ այս հակապատկեր տեսարանէն զգածեալ , արբշիւ 'ի խնդութենէ և յանբերելի վշտոյ , կ'առանձնանայ , միայնակ կը խորհի , կը հետազօտէ իւր սրբտին վերայ եղած տպաւորութիւնները , նոցա ծագն ու ծայրը , և կը գտնէ միայն Եկեղեցական Պատմութեան մէջ . կը խելամոէ , որ չեւ թղթատած սրբաբազորութեանց այս յիշատակարանը , չեւ ընթերցասիրած , դատարկ էր իւր սիրտն ու հոգին իւր մայրենի Եկեղեցւոյ և Ազգի համար . այլ յետ ուսանելոյ , զեղաւ սիրտն կրօնասիրական և հայրենասիրական հրաւառ զգացմամբ . լեցաւ աչկունքն արտասուօք անսպառնում հոգեղմայութեան և սրտաբուղիս հառաչանայ :

Ուրեմն ինչ է աւելի կարեւոր և կարեւորագոյն քան ուսումն Եկեղեցւոյ պատմութեան :

Ուստի Եկեղեցւոյ զաւակաց առաջին և նուիրական պարտաւորութիւնն է Եկեղեցւոյ Պատմութեան ուսումը : Եթէ կ'ուզեմք ճանաչել մեր Փրկիչն և վերածնողն , մեր Եկեղեցւոյ պաշտամունքը և դաւանած ճշմարտութիւնները , պարտիմք նոյն պատմութեմ գիմել . նա մեզ կ'ուսուցանէ այս ամենը , զենքեր կը տոյ մեզ զմեզ պաշտպանելու , բազմաթիւ նահատակաց օրինակաւ զմեզ կը քաջալերէ մեր Եկեղեցւոյն Առաքելական սովորութիւնները անխախտ և անարատ պահելու համար , կ'ուսուցանէ իսպառ խորշիկ և հեռաւ նալ օտար դաւանանքներէ իբր 'ի կործատութեան անդունդէ : Այս ուսմամբ

կարեմք ճանաչել մեր նախնեաց ոգին, սիրտը և կեանքը: Ուր չը կայ այս ճանաչողութիւնը, չը կայ այս ուսումը՝ անդ անպակաս են մղորութիւններ: Վասն զի տգիտութիւնը ինքնին մղորութի մի է, և չար քան զամենայն մղորութիւնս, և այս է գլխաւոր պատճառ, որ աղբայիներեն շատերը այլոց կամաց եւ կրից խաղալիկ եղած, դիւրաւ մոլեռանդ հետամուտներու որս ու ճարակ կ'ըլլան, կը խորթանան և կը խրթնանան:

Եկեղեցական ուսման անմշակ մընալն է, որ նախնեաց արիւնը ցամքած է ներկայ սերնդեան երակաց մէջ. նախնեաց սրտին մէջ եղած բոցավառ կրակը, երկնից սէրը, շիջած է ներկայ սերնդեան սրտին մէջ. Նորա երկնաւորին սիրով լինելով աներկիւղ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց, հիւսիսի ցոտսսարսուռ սառամանիքն կ'արհամարհէին, դիւաշունչ բռնակալաց սպառնական շունչն ու մուռնը առ ոչինչ կը գրէին. անմահին նուիրական սեղանին վերայ 'ի զոհ կը ճենճերէին, որոց եգեմաշունչ ծուխը, իբրեւ բոյր խնկոց թեթեւ ամբառնայր յաթող անմահին, և զոր հաճութեամբ հռտոտէր Աստուած և հրեշտակք: Իսկ այժմ սառնացեալ և ցրտացեալ ամենադոյն շահն իսկ կը խնայեն. քանզի տգէտ են, անուս են և անմասն նախնեաց փառքերէն:

Եկեղեցին տեսնելով իւր զաւակաց այս տխուր վիճակը և ապիրատութիւնը՝ 'ի սուգ կը համակի. և 'ի խոր կը խոցի. Ասրժես բաւական չ'են նորահին վետերն, գողցես հին դարերն կ'ապրին նորերուն մէջ իրենց յիսակալութեամբ և մոլեռանդութեամբ: Իւր վաղեմի ոստիները իբրեւ անձնաւորութիւն մոլեռանդութեան՝ իրենց դաւաւոր քէնն ու մոլեգնութիւնը իւր

ըւեւ ժառանգական զգուշի ախտ յորդւոց յորդի կը սնուցանեն: Հայաստանեայց Եկեղեցին ընդ միշտ նախատակած կը լինի նոցա լրբենի շրթնէրով իբրեւ շեղեալ 'ի ճշմարիտ քրիստոնէութենէ. ինչպէս 'ի հնումն, նոյնպէս ներկայիս մէջ նենգութեան, քիւնու և ատելութեան կայծակներն ու շանթերը անպակաս են մեր Եկեղեցւոյ գլխէն:

Արդարեւ տխուր է այս վիճակը և կացութիւնը, այս ամենը անուսումնութենէ յառաջ 'կը գայ: Տգիտութենէ մեր կրած չարիքներն անթիւ են եւ տակաւին պիտի կրեմք շատ հարուածներ ու վէրքեր, եթէ դարմանելու չը փութամք:

Հագարական և Պարսկական հալածանքները բնաւ չը կարացին սասանեցնել մեր Աղգը և Եկեղեցին, այլ առաւել ամրապնդեցին մեր Եկեղեցւոյ հիմը և պատմական ապացոյց մի եղան ալիսարհի, եթէ նորա դաւանած կրօնը ճշմարտութիւն է և հետեւաբար երկնային: Սակայն տգիտութիւնը եղած է և պիտի ըլլայ մեր ազգութեան համար փնաստար և հիմնափոր որդի. նովաւ մեր տունը հիմնայատակ քանդեցաւ. նովաւ անկան մեր հարստութիւնքը, նովաւ շիջաւ մեր փառաց ջահը. տգիտութեան աւերածը միմիայն գիտութիւնը կը շինէ: Եկեղեցւոյ զաւակները ուսանելով իւրեանց մօր պատմութիւնը, պիտի ստանձնեն մեծամեծ պարտաւորութիւններ. չոր, բոլոր դարու Հայաստանի հորիզոնին վերայ փայլող ջքնաղ անձերը՝ Ս. Սա. հակն և Մեսրոպը՝ բարձր հանճարի և գործունեաց կամաց այդ հազուագիւտ տիպարներն յօրինակ առնելով, պիտի պարտաւորին մերկալից ուղիւնու վայրենի արեաց վերայ երեքածուփ տատաշող մեր ազգութեան նաւը փրկել ու

գործելով կատարել տեաց դէմ, որք յա-
մենուստ միմեաքին նորա վերայ խու-
ժելով կրօնապառնան զայն անդնդապտոյտ
յորձանաց մէջ կլանել. պիտի պար-
տաւորին սանձակոծել նորա մոլեգնու-
թիւնը և Ազգային կենաց էութիւնը
ապահովութեան նաւահանգիստը խա-
րքսիւն. անվեհեր բանալ իւրեանց
կրօնին թշնամւոյն արձակած նետե-
րուն և իւրեանց մօր կեանքը ապահո-
վել. պիտի պարտաւորին իբրեւ հա-
րազատ որդիք՝ սիրով միանալ և ազ-
գային կենաց վերքերն պատատելով
դարմանել, պիտի պարտաւորին ձեռ-
քերնին լուսաւորութեան քահանայ
ներով հաւսածական վտարել մութն ու
մուայլ, որ պատած է Հայոց հորիզոնը,
ի մի բան Եկեղեցւոյ զաւակաց պար-
տաւորութիւնն է ուսանիլ և ուսու-
ցանել:

Իցիւ թէ նախնեաց սրբալոյս նշխա-
րաց շիրիմներէն յանկարծ մի հրեղէն
կայծ յոլանար, վառէր, բորբոքէր
Հայութեան ներկայ սերնդեան սիրտն
ու հոգին. տայր նմա հաստատուն և
աննկուն կամք, առաթուր հարկանել
ամեն սեպսցեալ ժայռեր ու խութեր,
որք նորա յառաջագիմութեան ընթա-
ցից խախտնարար կը կանգնին և խո-
յանալ յառաջագիմութեան գաւառ-
ները: Լսէ Աստուած Գրիգորի, Աստ-
ուած Ներսիսի և Սահակայ՝ Հայ ման-
կան խորոված սրտին հառաչալիւ ա-
ղերսը. ցօղէ շիթ մը ջուր կենաց
Հայութեան դօստացեալ բունին վերայ.
և ահա անդրէն պիտի կենդանանայ,
ծիւ և ծաղիկ, ի փառս Անուան քոյ
սրբոյ և ի շինութիւն Հայաստանեայց
Առաքելական Ս. Եկեղեցւոյ:

Յարո-լիւան Մ. Սիրո-նիւան
Դամասկայի.
Ալա. Ժառ. Արքեպիսկոպոս:

ՅԱՂԹԱՆԱԿ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ (1)

Ո՛չ որ մ'է և ո՛չ պատերազմ մի,
որ այս եղելութիւնը (քրիստոնէութիւնը)
կատարելագործեց. Ուրեմն
մի մարդոյ կեանք է. — ո՛չ: Պատե-
րազմ մ'է, երեք հարիւր տարուան
պատերազմ, զոր առաքեալք սկսեցին,
նոցա յաջորդները ու քրիստոնեայ սե-
րնդոց անընդհատ յաջորդութիւնը
յառաջ տարին: Քրիստոնէութեան
բոլոր նախնի քարոզիչները մարտիրո-
սացան. այս երեքդարեան ժամանա-
կամիջոցին մէջ Եկեղեցւոյ նախագա-
հական աթոռը մի կառավինատեղի էր,
որ անհրաժեշտաբար կ'ապահովէր
այն անձին մահը, որ այս մասին կո-
չումն ունէր: Շատ քիչ անգամ այս
միջոցին ուրիշ եպիսկոպոսներու համար
աւելի աղէկ վիճակ մի պահուած էր:

Այն պատերազմին մէջ բոլոր ինք-
նակալները և երկրի բոլոր իշխանու-
թիւնները զաշնակցած էին, որոց դէմ
բանակ մը չ'եմ տեսներ, այլ միայն մի
գաղտնի զօրութիւն. սակաւաթիւ
մարդիկ երկրիս վերայ յաստ և անդ ջը-
րուած՝ ուրիշ մի ապտտանարան չ'ու-
նին բաց ի խաչի խորհրդեան վերայ
ունեցած պարզ հաւատէն: Ի՛նչ նոր-
օրինակ և զարմանալի խորհրդաւոր նը-
շան. Նորա աշակերտները զինուած
են այս նշանով, որ Աստուածամար-
դոյն չարչարանաց գործի եղաւ. աշ-
խարհիս մէջ նոցա հաւատոյ նշանն է
Խաչը որ իբրեւ հրավառ բոց մէկէն
միւսին կը հաղորդուի:

(1) Սոյն հատուածը քաղուած է Հեղինե կղզւոյն
մէջ Ս. Կաթողիկոսի Պէրթրան զօրապետին և այլոց
հետ ունեցած խօսակցութիւններէն:

Քրիստոս՝ Աստուած մեռաւ, կր-
սէն, ի փրկութիւն մարդոյն. ինչպի-
սի ձկտումն և յուզումն կր բարբաբն
այս պարզ խօսքերը այն խոնարհ դրօ-
շակին շուրջը : Արշափ արիւն թափե-
լաւ երկու կողմէն. ինչ կատաղու-
թիւն : Բայց ճակատին մի կողմը զոյ-
րոյթ, ատելութիւն և բարբարոսու-
թեան բոլոր դառնութիւնը, միւս կող-
մը հանգարտութիւն, բարոյական քա-
ջութիւն եւ հիանալի անձնութեան
թիւն : Երեք հարիւր տարիներու մէջ
միտքը անասնական կրից բրտութեան
եւ կարծրութեան դէմ կը մաքառի.
Խիղճը՝ բռնակալութեան, հոգին՝ մարմ-
նոյն, առաքինութիւնը ամեն տեսակ
մոլութեանց դէմ : Քրիստոնէից արիւ-
նը հեղեղի պէս կը հոսի. մինչեւ իսկ
մահուան վերջին տագնապին մէջ զի-
րենք սպաննող ձեռքերը կը համբու-
րեն. հոգին միայն կը բողբէ. մարմի-
նը ամենատեսակ տանջանաց մօտնը-
ւած է. ամեն ուրեք քրիստոնէայք կ'ան-
կանին, և ամեն ուրեք կը յաղթանա-
կեն :

Կրնա՞ք երեւակայել մի մարդ, որ
զկնի մահուան իւր յիշատակին նուի-
րեալ մի հաւատարիմ բանակով յաղ-
թութիւններ վաստիկ : Կրնա՞ք երեւա-
կայել մի անսովոր մարդ, որ իր հրա-
մանին տակ առանց թռչալի, առանց
այս աշխարհիս մէջ մի ակնկալութեան
կամ յուսոյ զննուորներ ունենայ և ա-
մեն տեսակ զրկանաց մէջ յարստեւու-
թեան եռանդ և զօրութիւն ներշնչէ :

Աւանդ, դեռ Թիւրքիոյ մարմինը
ջերմ էր, անոր բանակը Մոնթէքու-
բոլի դէմ նահանջեց. և իմ բանակս
զիս մոռցաւ, մինչդեռ կ'ապրիմ, ինչ-
պէս մոռցաւ Կարկեդոնացւոյ բանակը
զԱնիւրազ, Ահաւասիկ մեր մեծ մար-
դոցս զօրութիւնը, կորսուած մի սլա-
տերազմ՝ զմեզ կը խորտակէ և մի ան-

յաջողութիւն զմեզ մեր բարեկամնե-
րէն կը զրկէ : Քանի՞ քանի Յուդաներ
տեսայ բոլորովքս, ախոս, եթէ ես
քաղաքակտե այս մեծ անձանց միտքը
կորուզ չ'եղայ հաճեցնել և հաւանեցը-
նել, այն զօրապետները, որ զիս մատ-
նեցին, եթէ իմ անուան գրծեցին և
իրենց կայսեր, իմ հայրենեացս վերայ
ունեցած սիրոյս և այն հաւատարմու-
թեան, զոր ոչինչ կարող է տկարացը-
նել, իրական և ստոյգ հրաշքները ու-
րացան : Եթէ ես, որ յաճախ զանոնք
ի յաղթութիւն առաջնորդեցի, ի կեն-
դանութեան չ'եմ կարող անոնց սրտե-
րը վերստին բորբոքել. ինչ կերպով
ապա յետ մահուան նոցա եռանդն ու
նախանձայուզութիւնը պիտի կարողա-
նամ վստ պահել և սնուցանել : Կրնա՞ք
երեւակայել Կեսարը, որ Հռովմայ Մե-
րակուտին վերայ շարունակ իշխէ. իր
գերեզմանի խորէն կայսրութիւնը կա-
ռաւորէ եւ Հռովմայ գաւառներուն
վերայ հսկէ :

Ահաւասիկ Քրիստոնէութեան աշ-
խարհիս վերայ տարած յաղթանակին
պատմութիւնը. ահա քրիստոնէից Աս-
տուծոյ զօրութեան, հաւատքին բրած
յառաջադիմութեան եւ Եկեղեցւոյ
յարատեւ կառավարութեան հրաշքը :
Աղգեր կ'անցնին, գահեր կը փլու-
նան, բայց այն կը մնայ. ինչ է ուրեմն զայն
հաստատուն բռնող զօրութիւնը, որոյ
վերայ կը խուժեն կրից յուզեալ փոթո-
րիկները և անհաւատ դարձաւ արհա-
մարհանքը. որո՞ք բազուկն է, որ զայն
հաստատուն կը պահէ : Աղէքսանդրի
յաղթութիւնները կը հռչակեմք. լաւ,
բայց հոս յաղթող մը կայ, որ ոչ միայն
մէկ աղգ կը միացնէ և իրեն կը ձգէ,
այլ ամբողջ մարդկային ցեղը. ինչ հը-
րաշք : Մարդկային հոգին իւր ամեն
կորուզութեամբ Քրիստոսի գոյութեան
հետ կը միանայ և ինչպէս : Անկիայ

ժողովոյ սէրը կ'ուղէ ստանալ, որ շատ դժուարին է. սէրը, զոր իմաստուն մարդը՝ իւր բարեկամներէն, հայրը՝ որդիէն, կիներ՝ ամուսինէն, եղբայրը՝ եղբորմէն ի զուր կը խնդրեն. բայց Քրիստոս իբրեւ բացարձակ իրաւունք կը պահանջէ և կըստանայ. ասկէց կ'եզբակացնեմ նորա Աստուածութիւնը:

Աղէքսանդր, Կեսար, Անիբազ, Լուգուրիոս ԺԴ Դ. իրենց բոլոր հանձարովը և յաջողակութեամբը այս մասին չը յաջողեցան. նոքա աշխարհիս յաղթեցին, բայց մէկ բարեկամ չը վաստկեցան. . . . Քրիստոս կը խօսի, և ահա անդէն ազգեր և սերունդներ իրարու կը միանան արեան կապակցութիւններէն աւելի մերձաւոր և մտաւոր կապերով, աւելի սրբազան միութեամբ, որ ամեն տեսակ կապերէն աւելի հաստատուն է: Քրիստոս սիրոյ բոլոր ծաւալելով՝ անձնասիրութիւնը կը շնորհանէ, սուրբ սէրը ուրիշ ամէն տեսակ սիրոյ վեր. ի կը զօրանայ և կը տիրէ: Այս հրաշքը տեսնելով ինչպէս կ'սրելի է Բանը, աշխարհի Արարիչը չը ճանաչել և չը խոստովանել. այս կերպով Քրիստոսի ամենամեծ հրաշքը, առանց ընդդիմաբանութեան և հակառակութեան, սիրոյ և գթութեան թագաւորութիւնն է: Նա միայն ունի այն զօրութիւնը, որ մարդուն զոհել տալով ամեն առօրեայ իղձ և յօժարութիւն, կը բարձրացնէ նորա սիրտը դէպ յանտեսանելի աշխարհը: Նա միայն այս զոհողութիւնը կարգած ատենը երկիւր և երկրի միջեւ մի կապ հաստատեց, ամեն անոնք, որք կը հաւատան, իրենց մէջ կը զգան այս հրաշալի, գերբնական եւ ամենակատարեալ սէրը. նշանաւոր երեւոյթ մը, որ չը բացատրուիր մարդկային դատողութեամբ և զօրութեամբ: Այս նոր Պրոմէթէսը երկրի վերայ սրբազան կը-

րակ մը վառեց, որոյ ոչ զօրութիւնը կրնայ նուազեցնել աւերիչ ժամանակը և ոչ անոր տեւականութեան մի չափ կամ սահման դնել: Այս է որ զիս (Ն սբողոն) ամենէն աւելի կը սքանչաղեն. շատ անգամ խորհած եմ անոր վերայ և միշտ կ'ապացուցանէ Քրիստոսի աստուածութիւնը ազատ ամեն տարակուսանքէ. . . . Հիմա ես, որ Ս. Հեղինէի մէջ եմ, փակուած եմ այս ապառաժ տներուն մէջ, ո՞վ է որ իմ պատերազմներս կը մղէ և վասն իմ թագաւորութիւններու կը յաղթէ. ո՞ր են դժբաղդութեանս մէջ իմ պաշտակոններս, միթէ մէկն իսկ կը խորհի իմ վերայ, ո՞վ է Նւրոպայի մէջ յօգուտ անձիս գործողը. ո՞ր է ինձ հաւատարիմ մնացողը:

Այսպէս է մեծ մարդոց, ինչպէս Կեսարի և Աղէքսանդրի բաղդն ու ճակատադիրը. մէք մոռցուած եմք, և մի յաղթողի ինչպէս կայսեր անունը լոկ դպրոցական շարագրութեան, կամ խնդրի նիւթ կը լինի: Մեր քաջութեանց դիւցազնական գործերը մի իմաստակի, կամ վարժապետի գաւազանին ներքեւ կ'իյնան, որ կամ կը գովէ և կամ իր քննադատութեամբը կը նախատէ զմեզ. . . . Ահաւասիկ Մեծն Նսբողոնի մօտալուտ ճակատագիրը. ինչպիսի մի խոր անդունդ կայ իմ անհնարին թշուառութեանս և Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան մէջ, որ ողջ տիեզերաց մէջ ապրելով կը քարոզուի, կը խնդուի, կը սիրուի և կը պաշտուի: Միթէ այս մեռելութիւնն է. ահա Քրիստոսի մահը, ահաւասիկ այն Աստուծոյ զօրութիւնը:

Ի Խարգմանո-Լեանց
Յով. Տաթևաճեանի:

ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՐԶ ԽՅԱԿՅՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ ԺԴ .

ԾԱՆՈՒԹԻՒՆ

(Շար .)

ԾԱՆՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Ի՞նչ է ծանոթեան կեդրոնը . — Աստի՜
փետրագնտի մը , չաքարի գլխու մը ,
մակոյկի մը , կառքի մը , եւ այլոց մէջ
գտնուած տեղոյն ազդեցութիւնը :

ՄԱՐԻԱՄ . — Յոկոր , կ'ուզէս գըն-
տահարով խաղալ :

ՅԱԿՈԲ . — Անկարելի է բու փետրա-
գնտովդ խօսալալ . շատ գէշ է :

ՕՐ . ԹԱԳ . — Ի՞նչ ունի ուրեմն
այդ փետրագունտը :

ՅԱԿ . — Շատ հին է :

ՕՐ . ԹԱԳ . — Ա՛ռ քեզի պատճառ մը ,
մը է տեսնեմ :

ՄԱՐ . — Ահաւասիկ :

ՕՐ . ԹԱԳ . — Զեմ կարծեր որ ասի-
կա շիտակ երթայ . ասոր մէկ կողմի
ուժը փետուրներն ամբողջապէս կը
պահսին :

ՅԱԿ . — Միշտ կողմնակի կ'երթայ :

ՕՐ . ԹԱԳ . — Ե՛կէք որ շօնեմ :

ՅԱԿ . — Ի՞նչպէս :

ՕՐ . ԹԱԳ . — Գիտե՞ք թէ որ կողմը
կը հակի :

ՄԱՐ . — Հարկաւ՝ փետուրներուն ե-
ղած կողմը :

ՕՐ . ԹԱԳ . — Անտարակոյս , վասն զի
փետուրներն որչափ ալ թեթեւ ըլլան ,
գարձեալ կը կռնեն եւ փետրագնտին
այն կողմն աւելի կը ծանրացնեն : Եթէ

փետուր ունիք , բերէք որ պակասանե-
րուն տեղը դնեմ :

ՄԱՐ . — Ո՛չ , օրիորդ , չ'ունինք :

ՕՐ . ԹԱԳ . — Լաւ ուրեմն , մէկ կողմն
եղած ուժը փետուրներէն չորսը միւս
կողմը կը փոխադրեմ , անանկ որ ամէն
տեղ՝ երկու պարագայ ծակերուն մէջ
մէկ փետուր ըլլայ . որով ծանրութիւ-
նըն երկու կողման վրայ ալ հաւաստ-
րապէս կ'ազդէ եւ փետրագունտը չի-
տակ կ'երթայ :

ՄԱՐ . — Ի՞նչպէս կ'ըլլայ որ միշտ
փետրագնտին խիցը գնտահարին վրայ
կ'իյնայ եւ ո՛չ փետուրները :

ՕՐ . ԹԱԳ . — Որովհետեւ խիցը փետ-
րագնտին աւելի ծանր մասն է եւ այն է
որ իյնալու ատեն փետուրները վար
կը քաշէ : Պէտք է գիտնաք , որ մար-
միններն իյնալու ատեն միշտ իրենց
ծանր կողմին վրայ կ'իյնան : Բոլոր մար-
մնոց մէջ մաս մը կայ , որ իյնալու ա-
տեն միւսները վար կը քաշէ , կէտ մը ,
ուր ծանրութեան իւրաքանչիւր մաս-
նեկի վրայ քրած ազդեցութիւնները կը
միանան : Այս կէտը ճանրո-վեան կեդրոն
կը իջուի չափատուին մարմին մը հաւա-
սապաշտ-վեան մէջ ըլլալու , այսինքն իւր
գտնուած դրոյ մէջ անշարժ եւ առանց
իյնալու մնալու համար պէտք է որ իւր
ծանրութեան կեդրոնէն անցնող կեդ-
րոնահայեացն իւր խաղաղին , այսինքն յե-
ցած կողմին մէջ ըլլայ : Մարմնոց մը հա-
ւասարակշռութիւնն այնչափ աւելի
կայուն կըլլայ , որչափ իւր ծանրու-
թեան կեդրոնը ցած ըլլայ : Ահա՛ այս
է պատճառը , որ շաքարի գլուխ մը
իւր խարսխին վրայ այնչափ հաստատ
կը կենայ . վասն զի իւր ծանրութեան
կեդրոնը խարսխին շատ մօտ է , եւ այս
կեդրոնէն անցնող կեդրոնահայեացն ալ
իւր խարսխին մէջ տեղը կ'իյնայ , որ
աւելի կը գծաւարացնէ անոր կործա-
նումը : Եթէ ուզենք կրնանք շաքարի

գլուխ մը չընել և գտագաթէն քիչ մը կտրելով՝ գլխի վրայ կեցնել, որ ատեն ծանրութեան կեդրոնէն անցնող կեդրոնահայեացքը թէև գարձեալ խորութիւն մէջ տեղը կ'իյնայ, բայց այս դրից մէջ ծանրութեան կեդրոնը շատ բարձր ըլլալուն շնորհիւ շարժարի գլխուն մէկ փոքրիկ շարժումը կրնայ կեդրոնահայեացքը խարսխէն դուրս հանել և շարժարը կործանել։ Ուրեմն մարմնոյ մը ծանրութեան կեդրոնն սրճափ ցած ըլլայ և իւր խարսխին մէջ տեղն ինկող կեդրոնահայեացքին մօտենայ՝ նոյն մարմինն այնչափ գոռաբաւ կը տապալի։ Շատ անգամ անհրաժեշտ է այս բանս գիտնայ, կ'ուզեմ ձեզ այս մասին օրինակ մը տալ։ Օր մը այն ինչ ուրիշ չորս անձանց հետ մակոյկի մը մէջ նստած կ'երթայինք, յանկարծ փութորիկ մը փութաւ և հովն սկսաւ այնչափ սաստիկ փչել, որ մեր նաւակն ամեն վայրկեան շրջելու վտանգի մէջ էր։ Մեր երկուքն այնչափ մեծ էր և յուշումն այնչափ բուռն, որ չը կրնալով ալ նստած տեղերնիս կենալ բոլորովին ելանք կանգնեցանք, որով մակոյկն ըսկըսաւ ալ աւելի տարուբերիլ, վասն զի մեր կանգնելովն նաւակին ծանրութեան կեդրոնը բարձրացաւ, որ մեր իննին հետ նոյնն էր, բայց բարեբաղդաբար թիավարը մեզ պոռաց որ մակոյկին խորը երկնանք, անմիջապէս հընադանդեցանք։ Այսու նաւակին ծանրութեան կեդրոնը ցածցաւ և սկսաւ հովէն նուազ տարուբերիլ և վերջապէս թիավարին զայս գիտնալն ու յիշելը՝ զմեզ վտանգէն փրկեց։

Անշուշտ տեսած էք խարսի վեռնաւորած սայլեր, որոնք իւրաքանչիւր քաղի կը տատանին և եթէ քիչ մը ծռին անմիջապէս կը շրջին, վասն զի այնչափ բարձր բեռնաւորած են, որ սայլին ու խարսին բովանդակ կը ըն

ծանրութեան կեդրոնը շատ բարձր կը գտնուի և քիչ մը ծռելով՝ իրենց ծանրութեան կեդրոնէն անցնող կեդրոնահայեացքն անուշին խարսխէն դուրս կ'իյնայ, որով սայլն խակոյն կը կործանի։ Ահա այս է պատճառը, որ պնդակառքերը շատ անգամ կը շրջին։

Ծանրութեան կեդրոնը, առանց մեր գիտութեան կամ մտածման, մեր շարժմանց մեծ մասը կը կանխաւորէ։

ՅԱԿ. — Ի՞նչպէս։

ՕՐ. ԹԱԳ. — Մարդ մը եթէ բեռ մը կ'անըկին վրայ բառնայ՝ դէպ առաջ կը ծռի, եթէ կուրծքին վրայ բառնայ՝ դէպ ետեւ և երբ բեռն ուսին կամ բազկին վրայ ըլլայ, կամ մէկ ձեռքը, պարապ եղած կողմը կը հակի։ Սանդուխէ մը վեր ելնելու կամ աթոռի մը վրայ բարձրանալու համար դէպ առաջ կը ծռինք և փոխադարձաբար, երբ մէկ ոտքերնիս սահի, մեքենաբար ինկող կողման հակադիր բազուկնիս կը տարածենք և այս ամենը կրնենք, որպէս զի մեր ծանրութեան կեդրոնէն անցնող կեդրոնահայեացքը մեր խարսխին, այսինքն մեր ոտքերուն վրայ իյնայ, կամ անոնց մէջ տեղերը։

Մարմնոյ մը ծանրութեան կեդրոնը գտնելու կերպը սորվելը կրնայ իրատ օգտակար ըլլալ շատ դիպուածոց մէջ, բայց չեմ կրնար այժմ զայն ձեզ բացատրել, վասն զի տակաւին չէք կրնար դիւրս հասկնալ, բայց պէտք է գիտնաք, որ զայն կարելի է գտնել և կը խոստանամ ձեզ ժամանակէ մը յետոյ սորվեցնել։

ԳԼՈՒԽ ԺԴ .

ԾԱՆՈԹԻՒՆ

(Շար .)

Բաբանի խաղ . — Կշիտ . — Կշիտ, երկա-
թուղույ կայարանաց :

ՕՐ . ԹԱԳ . — Առգեօք բաբան (տան-
կալա փիշորի) խաղայամ էք երբէք :

ՅԱԿ . — Ո՛հ, օրիորդ, բաբանն ի՞նչ է :

ՕՐ . ԹԱԳ . — Եթէ կ'ուզէք, հատ
մը շինենք . և ահաւասիկ սա կտրուած
ու գետին տապալած ծառին բունը և
քիչ մը հեռուն տեսնուած մեծ տախ-
տակը բաւական են բաբան մը շինե-
լու համար . Օ՛հ, օգնեցէք ինձ որ այդ
տախտակը հոս բերենք և այս պառ-
կած բունին վրայ խաչաձեւ դնենք,
այնպէս որ տախտակին մէջ տեղը ճիշդ
բունին վրայ գայ եւ հաւասարակշիւ
մնայ :

Ահա՛ այս է բաբանը, արդ՝ եթէ
Մարիամը տախտակին մէջ կողմը նըս-
տի և Յակոբն ալ միւս կողմը, իւրա-
քանչիւրնիդ փափոխակի ել և էջ կը-
նէք, ախիա տեսակ մը կշռայ կը նմա-
նի ինչպէս են աւհաստարակ հաշուե-
տանց մէջ տեսնուածները . Այս կշի-
ռըն երկաթէ դաւաղանէ մը կը բաղ-
կանայ, որ լծակ կը կոչուի և իւր յե-
ցակէտէն երկու հաւասար մասանց
բաժնուած է, որոնք լծակին բաղ-
նէրը կը կոչուին, և իրենց ծայրերէն մէյ-
մէկ նշար կախուած է . Այս կշիւը
ճիշդ ըլլալու համար պէտք է որ եր-
կու նժարները հաւասարակշիւ ըլլան
և լծակը հորիզոնական :

ՅԱԿ . — Օ՛հ, մեր բաբանը փորձենք :

ՄԱՐ . — Օրիորդ, այս չ'եղաւ, ես
Յակոբէն ծանր ըլլալով միշտ վարը պի-
տի մնամ և Յակոբն ալ բարձր :

ՕՐ . ԹԱԳ . — Իրաւութեք ունիս, բայց

կրնանք ասոր դարման մ' ընել տախ-
տակը քիչ մը Յակոբին կողմը հրելով
և քու կողմդ կարծեցնելով . Շոգեկա-
ռաց կայարաններուն և վաճառանոց-
ներուն մէջ ծանր բեռներ կշռելու հա-
մար տեսակ մը կշիւ կը գործածուի,
որ ճշմանց կը կոչուի . այս կշռոյն մէկ
բաղուկը միւսէն շատ երկայն ըլլալով
երկայն բաղուկին կողմը դրուած փոք-
րիկ կշիւ մը հակադիր կողմը դրուած
ահագին բեռները կը վերցնէ . ճշա-
նոց մը քանորդ կը կոչուի . Երբ անով
մարմին մը կշռելու համար նոյն մար-
մինէն տասն անգամ թեթեւ կշիւ մը
պէտք ըլլայ :

Ահա՛ այս սկզբունքով շինուած են
նաեւ Գալիլայիները, որ Տաճկաստանի մէջ
շատ կը գործածուին :

ԳԼՈՒԽ ԺԵ .

ԿԵԴՐՈՆԱԽՈՅՍ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Զխալարք եւ միսն կրկեսի . Վաչա խաղ-
զոյնեղուն մողկանք . — Զուսնի մը ծայ-
րէն կախուած ջրալից ամանի մ' առանց
Թափեղու դառնալը :

ՄԱՐ . — Օրիորդ, երէկ կրկես դա-
ցինք, ուր բան մը տեսայ, որոյ ամե-
նեւին չը կրցի խելք հասցնել . Կրնաք
ինձ բայաարել թէ ինչո՞ւ ձիավարներն
ու ձիերը գոռնալու ատեն դէտ չ'ի
կրկեսին կեդրոնը կը հակին :

ՅԱԿ . — Որովհետեւ եթէ այնպէս չը
հակին՝ հանդիսականաց կողմը կը մը-
ղուին և անոնց վրայ կ'իյնան . որ երկու
կողմին համար ալ տհաճելի է :

ՄԱՐ . — Շատ լաւ, բայց ինչո՞ւ պի-
տի իյնան, չը դարձած ատեննին այս-
պէս չ'են հակիր, այլ իրենց ձիերուն
վրայ բոլորովին կեդրոնահայեաց դիր-
քով կը կենան և չ'են իյնար . դառնա-

սխառ առեանին կրսիսին հակիլ և որչափ արագ դառնան, այնչափ աւելի կը հակին:

Օր. ԹԱԳ. — Ձիալարք որչափ արագ դառնան, այնչափ աւելի առաքրիզին կեդրոնէն հեռու կը մղուին. և ահա այս զօրութեան իրենց մարմնոյն կշռութեամբ գիմակալելու համար է որ ձիավորներն ու ձիերն ինքնաբերաբար դէպ ի կեդրոնը կը հակին: Այն Կարոյն ճապին զօրութիւնն իւր առաջ կը բերէ, որ իւր ջանայ զայն հեռացնել այն կեդրոնէն, որ ընդ ընդ կը Կարոնայ: Այս զօրութիւնը կեդրոնախոյս զօրութիւն կը կոչուի:

Այն նոզկանքը, որ կը զգանք արագացէս դառնալու, օրինակի համար վարկը, ատեն, դարձեալ կեդրոնախոյս զօրութեան առաջ կուգայ. որով հետեւ մեր ոտքերը, որոց վերայ կը դառնանք, շարժման կեդրոնը կը կազմեն, որմէ կը ջանան մեր մէջ եղած հեղուկները հեռանալ, այս հեղուկները մեր սիրտն ու գլուխը կը գիմեն և գլխու պոռոյտ ու նոզկանք կը պատճառեն:

Եթէ ուզէք, կրնաք այս մասին գիւրիին փորձ մ'ընել. երբ գերձանի մը ծայրէն որ և իցէ մարմին մը, օրինակի համար փայտի կտոր մը կապէք և յետոյ գերձանին միւս ծայրէն բռնելով՝ դարձնէք, պիտի տեսնէք որ դառնալու ատեն գերձանը կը ձգտի և այնչափ աւելի զօրաւոր կը լըայ այս ձրգտումը, որչափ աւելի ծանր ըլլայ մարմինը և հարկումն արագ. և եթէ հարկական շարժումն ամենաերագ ըլլայ, կրնայ գերձանը փրթիլ:

Եթէ ուզէք, կրնաք ուրիշ զուարճալի փորձ մ'ալ ընել. երբ ջրալից աճան մը չուանի մը ծայրէն կախէք եւ յետոյ առանց ամանին բերանը գոցելու չուանին միւս ծայրէն բռնելով՝ պարսատիկի պէս օդին մէջ դարձնէք,

ամանին մէջի ջուրը բնաւ չը թափիր, թէ և պոռոյտ ընելու ատեն չըջուն դրից մէջ գտնուի. վասն զի ամանին մէջի ջուրը հարկման շատեն ոչ միայն իւր կշռոյն ազդեցութեան, այլ և կեդրոնախոյս զօրութեան ենթակայ կը լըայ, որ առաջնայն ազդեցութիւնը կը խանգարէ: Երբ ամանն իւր ջրմանին վերին կէտը գտնուի ջուրը կ'ուզէ իւր կըշռութեամբը վար թափիլ. բայց կեդրոնախոյս զօրութիւնը, որ վարէն վեր կ'ազդէ, ընդհակառակը կը ջանայ զայն դէպ ի վեր մղել. Ուստի երբ այս երկրորդ զօրութիւնն առաջինէն մեծ ըլլայ, ջուրն առանց թափելու կրնայ ամանին մէջ մնալ:

Կրնանք համանման փորձ մ'ալ կատարել ջրմանակի մը ներքին կողմը ջրալից բաժակ մը գնելով և երագապէս օդին մէջ դարձնելով:

Կեդրոնախոյս զօրութիւնն ու ծանրութիւնը շատ անգամ իրարու կը գիմակալեն. ի մօտոյ աստեղաց շարժման վրայ խօսած ատենս պիտի բացատրեմ ձեզ թէ այս երկու զօրութեանց գիմակալութեան ինչ արդիւնք առաջ կուգայ:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մըջումք. — Խօսումն մեքենայ:

Մըջումք. — Հատորներ գրուած են մըջնոց բնութեան վերայ զանազան հեղինակներէ. բայց ամենէն աւելի սոյս մասին գովութեան ու փառաց արժանի է Հիւպեր Անգղիացի գիտնականը, որ յայտնեց գիտութեան աշխարհին հետաքրքրական շատ գաղտնիքներ միջատներու կենաց վերայ: Այս համ

բերատար դիտողը ցուցած էր իւր տունը միջնոցներով, մինչեւ իսկ իւր հանգերձեղինաց դարանները, և ըրած հետազոտութեանց արդիւնքները հրատարակեց նշանաւոր հեղինակութեամբ մը։ Գիտեմք սակաւութեամբ և ուրիշ շատ ստորերկրեայ հասարակապետութեանց գործունէութիւնը, որք կը բաղկանան աշխատաւորներէ, անգործներէ (չեղբներէ), պատերազմողներէ, ճարտարներէ, տէրերէ և գերիներէ։ այնու ամենայնիւ սոցա հետազոտութիւնը այնչափ յանկուցիչ է, որ գրաւած է մինչեւ իսկ հոյակապ հանձարներ։ Ինչպիսի է օրինակի համար Անգղիոցի Սիր-Ժօն-Լիւպպոք անուանի գիտունը, որ այնչափ գեղեցիկ հետազոտութիւններ ըրաւ առաջին մարդոյն վերայ, չը զուցաւ նաեւ նուիրել վայրկեան մը միջնոց ստորին ցեղին մի և նոյն արգարացի ակնարկը մի և նոյն նուրբ գատողութիւնը, զոր գործածած էր գերազանց յաջողութեամբ մարդկային սեռի ուսման համար նախապատմական ժամանակաց մէջ։

Մեզ համար անկաշելի է ուղղակի միջնոց հետ գաղափարաց հազորգակցութեան մոնել։ այլ միայն քննելով անոնց գործերը և շարժումները կը հետեւցնեմք անոնց զգացում և մերկնեւրուն նման որոշիչ խօսքեր ունենալը, ասոնք գիպուածական գատումներ են, և ասոնցմէ զատ ուրիշ միջոց մը չ'ունիմք, մինչեւ որ Սողոմօնի իմաստութեան մասնակից գիտուն մէկը յայտնէ վերստին անասնոց լեզուի գաղտնիքը։

Մի քանի կենդանիներու համար, որոց հետ հաղարաւոր տարիներէ ՚ի վեր ընտանեւար կը վարուիմք, ինչպէս են շունը, կատուն, ձին, ունիմք միջոցներ հասկացնել անոնց մի քանի պարագաներու մէջ մեր կամքը և հասկա-

նալ հաւանականութիւն անոնց փափաքն ու կամքը. և ստոյգ է որ երբեմն բաւականին պարզ կերպով մեր և նոցա մէջ գաղափարաց փոխադարձութիւն մը կայ. սակայն թէ ի՞նչ կերպով կարելի է հաստատել իմացական յարաբերութիւն մի միջատներու հետ, այս է ահա ամենամեծ գաղտնիքը։

Այս նիւթի մասին եղած ամեն դիտողութեանց ընթացակից սխալներու հակառակ, կարելի չ'է միջիւնը չը նշկատել կենդանի մը մեզ աւելի մերձաւոր իւր իմացական կարողութիւններով, կենդանի մը, որ իւր բնազդումներով կը գուշակէ իւր կենաց վերայ ներգործող ամեն պատահար եւ նախազգուշութիւններով ասոնց առաջը կ'առնէ։ Այս մասին ամեն ոք պիտի համոզուի, եթէ մի քանի անգամ միջնոցներ գիտելու յօժարութիւն եւ հետաքրքրութիւն ունենայ. ուստի աւելորդ կը համարեմք աստ կրկնել նոցա կանոնաւոր աշխատութիւնը եւ ինչպիսի խնամով իրենց թրթուրները բուծանելը իբրեւ կով կաթնաւէտ, և այլն և այլն։ Սողոմօն իմաստունը մըրջնոց կը դրկէ ծոյլերը աշխատութիւն ուսանելու համար և հնութեան առաստիւղախօսները իբր տնտեսագիտութեան օրինակ կընծայէին միջիւնը։ Անգղիացի Ժ. Լիւպպոք գիտունը եւս սքանչացմամբ կը խօսի սոցա վերայ. տեսած է սա յայգուէ մինչ ցերեկոյ մըրջիւնի մը անդադար աշխատիլը, որ փոխադրած է 187 թրթուրներ, կամ ըստ հասարակութեան յո-էր։

Դարձեալ կը պատմէ, որ ուրիշ միջիւն մը, որ բոլոր օրն աշխատած էր՝ փակուելով շիշի մը մէջ հոն ամբողջ շաբաթ մը մոռցուած կը մնայ զուրկ ամեն սնունդէ. յետոյ արձակուելով թրթուրներու շեղի մը քով մըրջոցէն մէկ մեզր հեռաւորութեամբ՝

իւր բոյնը դատարկաձեռն չ'երթալու համար անմիջապէս թրթուրմը կրճատէ և բեռնաւորուած կ'երթայ. կէս ժամէն յետոյ կը վերադառնայ ուրիշներ տանելու համար. Ահա չքոտի միջատ մը, որ կը սքանչացնէ հանճարեղ մարդը:

Մըջնոց իրարու գաղափարներ կամ տեղեկութիւններ հաղորդելու կարծիքը հաստատելու համար Անգղիացի գիտողը հետեւեալ փորձը կընէ. երկու գոգաւոր ապակիներ կը դնէ հաղորդակցեալ մըջնոցի ճանապարհին թղթեայ համանման ճանապարհներով. ապակիներուն մէկուն մէջ հարկւրաւոր թրթուրներ կը լեցնէ. խի միւսին մէջ մի քանի հատ միայն. յետոյ իւրաքանչիւրին մէջ մէկ մըջիւն կը ձգէ. իւրաքանչիւր մըջիւն թրթուր մը առնելով բոյնը կը դառնայ. յետոյ կը վերադառնան իրենց պաշարին, բաց ասոնցմէ այն, որ քիչ թրթուր ստուշնախող ապակիին ճանապարհը գիտէր, առանձին կ'երթայ, խի միւսն 11 ընկերներով: Յայտնի է, որ սոքա հաղորդած էին իրողութիւնը և խումբի մը կարեւորութիւնը բաշմաթիւ թրթուր ստուշնախող ապակիին երթալու. մինչդեռ բաւական էր մէկ մըջիւն ստիպաւոր թրթուրները փոխադրելու: Իւրաքանչիւր անգամին, որ մէկ մըջիւնը կը տանէր թրթուր մը, գիտողը ուրիշ մը կ'աւելցնէր. յետոյ ապակիները տեղափոխեց, արդիւնքը նոյն եղաւ: 2-3 թրթուր ստուշնախող, բաց միշտ վերադրեալ ապակիին մըջիւնը 21 ճամբորդութիւն ըրաւ մէկ ընկեր միայն բերելով յուսալով անշուշտ, որ իւրաքանչիւր գալուն աշխատութիւնը պիտի լմնայ. ընդհակառակն միւսը տեսնելով իրեն ապակին լեցուն՝ 22 ճամբորդութիւն ըրաւ 22 ընկերներ բերելով: Այս կրկնուած փորձերը մըջնոց իրարու հաս-

կացնելու կարելիութեան մասին երբեք կասկած չ'են թողուր:

ԽՅԱՄԱՆ ԱՆՔԵՆԱՅ.—Ներկայ տարւոյ անցեալ ամիսներուն՝ Փարիզի Մեծ-Հիւրանոցին մէջ 'ի տես դրուած էր մարդկային հնչումներն արտասանող և յօդակցող մեքենայ մը, որ կարող էր հնչել Ծրանսերէն, Անգղերէն, Իտալերէն, Պերմաներէն և վերջապէս ամեն լեզուի բառերն, որոց նուագածուն տեղեակ էր կամ որոց հնչումներն մեկին եղանակաւ մը կարող կ'ըլլար ըմբռնել: Մեքենայն երգիւնի նման մատանց միջոցաւ կը գործէ. ուստի և արտասանել տալու համար բաւական է միայն նոյն մատներն հարկանել:

Չը գիտցուիր մեքենային ներքին կաղմութիւնը, սակայն հաւանօրէն կը կարծուի, որ սորա հնարիչը՝ ջանացած պիտի ըլլայ մարդկան ձայնի գործարանին նմանեցնել, որ ինչպէս յայտնի է, շնչափողէ, ձայնական թելերէ և հագագի փոքրիկ ծակէ մը կը բաղկանայ, որոց հետ անհրաժեշտ է նոյնպէս ձայնի հնչմանց կարեւոր օդն յառաջ բերող թոքերը: Այս օլը շնչափողէն գալով կը ձօժէ ձայնական թելերը, որք մասնաւոր միանանց ազդեցութեամբ կը հեռանան, կը մերձանան, կը ձկտին և կը թուլանան որով յառաջ կը գայ հնչումը: Բերնի խոռոչը, լեզուի դիրքը, շրթունքն ու ատամունքը՝ կը կաղմաւորեն հնչումը, ձայնաւոր և բաղաձայն գրերն արտասանելու համար:

Լաբէնկաֆօն անուամբ որանչելի մեքենային միջոցաւ, բնագէտը կարողացան բերնի ներքին կողմը լուսաւորելով՝ դիտել սոյն գործարանի իւրաքանչիւր մասանց պաշտօնը: Խողովակի մը ծայրը գառնուէ թաղանթով արուեւ տական շնչափողներ շինուած կան, որք

ձայնի բուռն անհատն որ հնչումներ կը հանէն, երբ խողովակին մէջ փչուի։ Զայնաւորները տարբեր երկայնութեամբ խողովակի մը վերայ հաստատուած սուրիչ լեզուակի մը միջոցաւ կազմուած են։ Իսկ բաղաձայններն կազմող զանազան ձեւերն, ճոճումներն ու ձայները՝ յառաջ կը գան տարբեր դիրքով հաստատուած թաղանթներու միջոցաւ։

ԺէԴ դարուն սկիզբները՝ Փ. Մերսէն, որ շատ մը անոսի բաներ գրած է զանազան տառերու ներքին զօրութեանց վերայ, կ'ապահովէ, որ ինքը՝ ձայնաւորները ու բաղաձայնները որոշակի արտասանող երգեան մի տեսած է։ Կը յիշուի նաեւ 1791 ին խոսուն մեքենայ մի, թէ և սոսուգիւ խիստ անշուք կերպով կ'արտասանէր։ Վերջին տարիներս Պ. Բատո կըսէ թէ՝ Լոնտրայի մէջ վախճանեալ Վասթօն հռչակաւոր բնագետին քով, տեսակ մի հոլովակի տիկ տեսած է, որ քանի մի խօսք կ'արտասանէր։ Ամեն մարդ տեսած է նոր տարւոյ պաճուճապատանքը, որ ըստ բաւականին կըրնայ արտասանել Պապա, Մամա, և նոյն իսկ խօսքի կարճ հատուածներ։

Արդարեւ այս նոր խօսուն մեքենայն յայնի առաւելութիւն մ'ունի նկատմամբ միւս մեքենայից, վասն զի ըստ կամաց նուագածուին կարող է արտասանել գրեթէ մարդկային ազգի զանազան բարբառները կազմող ամեն յօդակցութիւններն ու հնչումները։ Քանի մի գրեր. բ, պ, և ո ձայնաւորներն՝ այնչափ որոշ չ'են հնչեր։ Այլ, բայց ի մի քանի խիստ արտասանեալ բառերէ, բաւական 'գոհացուցիչ եղանակաւ կը հնչուին։

Այս գործիքը իւր այս ամեն կատարելութեամբն հանդերձ պիտի կարենայ լինել արդեօք նիւթ հետաքրքր-

ութեան, ինչպէս օւրիշ եղանակն գործիներն, որք ունեցած են իւրեանց համբաւն ի ժամանակին, կամ թէ, կարելի պիտի լինի (ինչպէս յուսով են մի քանի անձինք) սակից օգտիլ ձայնի մեքենականութեւն ուսման և մասնաւորաբար խուլ-համբայ կըթուլթեան այս նոր ձիւղին համար, որոյ միակ նպատակն է արդէն զանոնք արուեստական կերպիւ խօսելու վարժեցնել։ Անշուշտ այս հարցումներուն պատասխանները պիտի տրուին, եթէ սոյն գործիքը ձեռնհաս անձանց քննութեան յանձնուի։



ԿԱՆՈՆԻՔ

ՎԱՍՆ ԿԵՆՏԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ (1)

Ա.

Գանձք՝ են վասն մխիթարութեան կենաց և ոչ կեանքն վասն կուտելոյ ըզգանձս։

Հարցի ցայր մի բարեպաշտ և ուշիմ, թէ արդեօք ո՞վ է երջանիկ և ո՞վ աղերջանիկ, պատասխանեաց, նա՛ որ եկեր եւ սերմանեաց, բարեպաշտ գրտաւ, և նա՛ ոչ մեռաւ առանց վայելելոյ, դժբաղդ։

Մի աղօթիք վասն այնպիսի անարդթշուառականին, որ ոչ գործեաց ըզգործ ինչ կարելիցութեան և որ սպառեաց զըօլանգակ կեանս իւր ի կուտել զգանձս առանց գործ գնելոյ զայնրս։

Բ.

Մարգարէն Մովսէս, յորոյ վերայ

(1) Այս խրատները Պարոյց Շէխ Սաատի առաջին հեղինակին իւրաքանչեւ գործն է թարգմանած է 1855 ին Մեծարդոյ Գէորգ Աւետեան Զաքարեանց, որ ի Բլաւիա Հնդկաց։

եղիցի իս սղսղութիւն, այսպէս խրատէր զԿորուսն (1), գործեալ զգարիս այնպիսի իմն եղանակաւ, որպէս բարձրեալն աւարեալ է քեզ, նա չ'եղեւ ունկնդիր, և լուեալ է քո զլսխմանէ նորա :

Որ չ'արար զգարիս դրամովն իւրով, կորուսեալ է զապագայ յոյս իւր 'ի հոգալ զգանձս :

Եթէ կամիս աշխարհային ընկոյք քաղել զօգուտ, ցոյց ընկերաց քոց զայն պիտի գթութիւնս, որպէս Աստուած պարգեւեալ է քեզ :

Արաբացիք ասեն, լէր բարերար առանց համարելոյ զայն պարտաւորութիւն իմն, յայնժամ կարի իմն հաւատեալ չահն դարձցի առ քեզ :

Ուր ուրեք ծառ բարերարութեան արմատ առնու, տարածէ զոստոս իւր 'ի վեր քան զերկինս, եթէ ակն ունիս ճաշակել զպտուղ, մշակեալ զծառն խընամով, և մի դներ'սղոյ յարմատ նորա :

Մատո՞ղ գոհութիւնս Աստուծոյ, զի օգնեցար երկնային պարգեւօքն եւ չարար զքեզ անմասն 'ի լիութենէ բաւեաց իւրոյ :

Մի պարծիր յընդունիլն քո 'ի պաշտօն իմն 'ի ներքոյ Թագաւորի, այլ լէր երախտագէտ առ Աստուած վասն զեւեղելոյ զքեզ 'ի ծառայութեան նորա :

Գ.

Երկու անձինք 'ի զուր աշխատ եղէն և 'ի գործ եղին զանօգուտ ջանս, նա՞ որ ստացաւ զգանձն առանց վաշելոյ զայն, եւ նա՞ որ ուսաւ զգիտութիւն, բայց ոչ 'ի կիր'էարկ զայն, որչափ և պարտաւորալ լիցես յուսումն գիտութեանց, յորժամ ոչ գործես իմաստնապէս, տգէտ ես :

(1) Արտաւ, Մովսէսի ազգականներէն միայն առնէն է, որ շատ հարուստ էր, կ'երեք թէ կոչուէր է, որ ընտանիքովը երկրացոյց եղաւ :

Գրատուն յոր վերայ բարձեալ են զմատենան, չ'է կարի իմն ուսեալ և ոչ իմաստուն, զինչ գիտէ նորին դատարի սիւսառակ գլխոյ, թէ արդեօք բարձեալ ունի զիայտո կամ զմատենանրս :

Դ.

Գիտութիւն 'ի կիր արկի վասն պաշտպանութեան կրօնի և ոչ վասն 'ի ձեռս բերելոյ զճոխութիւնս :

Որ միանգամ չարաչար վարեաց զիւր պարկեշտութեան զհամբաւ եւ զուսումն վասն օգտի, ձեւացոյց զըշտեմարան մի ցորենոյ և ապա իսպառ հոյ ձակատ ետ զայն :

Ե.

Ուսեալ որ առանց բարեխառնութեան է իբր կոյր ոմն որ բարձեալ տանի զահ մի, ցուցանէ զճանապարհայլոց բայց ոչ առաջնորդէ անձին իւրում :

Որ միանգամ ընդ խաղ արար զկեանրս, վատնեաց զգրամս իւր առանց գնելոյ զիր ինչ :

Զ.

Թագաւորութիւն մի ժառանգէ զհամբաւ յիմաստուն արանց և կրօնաստանայ զկատարելութիւն յառաքինեաց :

Թագաւորք առաւել կարօտ են արանց իմաստնոյ, քան արք իմաստունք ռոճկաց յարբունին :

Ունկնդիր լէր ո՞ր Թագաւոր իմուսն խրատու, վասն զի չ'ունիս քան զայս առաւել աղիւսագին առակ 'ի քումդ բովանդակ դիւանի :

Մի հաւատասցես այլում ումք զգործառնութիւնս քո, բայց եթէ խռնականց թէեւ հասարակ գործ է քո խաղալովն իմաստնոյ :